



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերջագործական համայնքներ
ուչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5685

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԿՈՄԿՈՒՄԸ

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ
ՅԵՎ,
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴՆ Ե

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОЗНАНИЯ
Ленинградский филиал
СССР

ՅԿՈՒ(07)

Հ-22

ԽՍՀՄ ԹՈՒՆՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ 1931

ՅԿՈՒ(07)

1 9 AUG 2005

24 NOV 2000

Հ Ա Մ Կ Ո Մ Կ ՈՒ Ս Ը

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԹԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋ ՆՈՐԴՆ Ե

ԿՍՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆԲԴՆԵՐԻ
ԾՐԱԳՐԵՐ

III ԲԱԺԻՆ

СОВЕТСКИЙ
ИНСТИТУТ
ОБЩЕСТВЕННЫХ
НАУК
СССР

5685

01 JUN 2013

ԶՐՈՒՅՑ ԱՌԱՋԻՆ

ՀԱՄԿՈՄԿՈՒՍԸ—ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՎԱՆԳԱՐԴՆ Ե

Թարգմ. ԵԱՄՓՐԹ

Բանվոր դասակարգը—հեռուստատեսության պայքարողն է սոցիալիզմի գործի համար: Կուսակցությունը—բանվոր դասակարգի ավանգարդն է և բոլոր աշխատավորների և շահագործվողների առաջնորդը: Կուսակցության շարքերի միասնությունը և յերկաթի դիսցիպլինան—կուսակցության մարտունակության հիմնական պայմանն է:

1. ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ—ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՂՆ Ե ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՐ

Ամբողջ աշխարհում սոցիալիզմի հաղթանակման համար միակ հետևողական մարտնչող դասակարգը հանդիսանում է բանվոր դասակարգը: Նա համախմբում է իր շուրջը բոլոր շահագործվողներին և ճնշվածներին՝ կապիտալիզմի դեմ պայքար մղելու համար: Խորհրդային Միության մեջ բանվոր դասակարգը սահմանել է իր դիկտատուրան և իր ղեկավարությունը՝ տակ բոլոր աշխատավորներին տանում է դեպի սոցիալիստական հասարակարգի կառուցումը:

Կապիտալիստական կարգի մեջ ճնշված և շահագործվող դասակարգ է հանդիսանում վոչ միայն բանվոր դասակարգը (պրոլետարիատը): Կապիտալի լծից տառապում է նույնպես և գյուղացիության հիմնական մասսան, հատկապես, նրա չքավորական մասը: Սակայն, կապիտալիս-



56277-66

Главлит № 85362.

Тираж 3000

15 типография ОГИЗ «Советское Законодательство». М. Дмитровка, 18.

տական հասարակարգի միակ դասակարգը, վորը վճռաբար և հետևողականորեն մարտնչում է բուրժուազիայի տապալման համար, հանդիսանում է միայն պրոլետարիատը: Այդ բացատրվում է այն հատուկ պայմաններով, վորոնց մեջ դրված են բանվորները կապիտալիզմի որոք, և առաջին հերթին նյութական արժեքների հասարակական արտադրության և բաշխման մեջ նրանց գրաված դրությունը:

Բանվոր դասակարգը—կապիտալիստական կարգի մեջ ամենից ճնշված դասակարգն է: Բանվորը չունի սեփականություն, չունի իր արտադրական միջոցները, նա միակ սեփականությունը—բանվորական ուժն է, վորնա վաճառում է կապիտալիստին: Բանվորների աշխատանքով ստեղծվում են կապիտալիստների դասակարգի հարստությունները, այն դասակարգի, վորին պատկանում են արտադրության բոլոր միջոցները—ֆաբրիկները, ստանոկները, հումուլթը: Բուրժուազիան ապահովում է պրոլետարիատին կյանքի ամենացածր նյութական մակարդակ: Բանվորը ստանում է միայն չնչին վճար իր բանվորական ուժի դիմաց, ըստ վորում ամեն մի ժամանակ կապիտալիստը կարող է զրկել նրան աշխատանքից: Իրա համար ել կապիտալիստական հասարակակարգում բանվոր դասակարգը «վոչինչ չունի կորցնելու, բացի իր շղթաներից» (Մարքս): Նա կարող է բարելավել իր կյանքի պայմանները և դեն շարտել կապիտալիստական ստրկության շղթաները վոչ այլ կերպ, քան միայն մինչև վերջ կործանելով կապիտալիստական ամբողջ կարգերը: Կապիտալիստական ֆաբրիկներում, վորտեղ բանվորները միավորված են հազարներով, նրանք այնտեղ անցնում են «աշխատանքի կոփող դպրոցը» (Լենին): Այստեղ բանվորներին միավորում և համախմբում են գոյություն միատե-

սակ պայմանները, այստեղ բանվորները մասսայով դեմ են յեղնում իրենց դասակարգային թշնամուն—կապիտալիստին: Այդ հանգամանքը բանվորների մեջ դաստիարակում է այն գիտակցությունը, վոր բուրժուազիայի դեմ մղած պայքարում անհրաժեշտ է գործողությունների միասնություն և իր ուժերի միաձույլ կազմակերպվածություն:

Վորջան ավելի կազմակերպվում և գիտակցություն է ձեռք բերում բանվոր դասակարգը, վորջան ավելի նա սկսում է հասկանալ իր ճնշված դրության պատճառներն, նա այնքան ավելի ուժեղ է դիմադրում կապիտալիստական ճնշման: Պայքարի ընթացքում բանվորներն ավելի ու ավելի յեն միաձուլվում, ավելի ու ավելի յեն գիտակցում իրենց շահերի հակադրությունը կապիտալիստների շահերին: Կապիտալիստների դեմ մղած իրենց պայքարում նրանք կազմակերպում են գործադուլներ և ցույցեր: Պայքարի առաջին շրջաններում գործադուլները կրել են տարերային անկազմակերպ բնույթ: Քանի գնում, բանվոր դասակարգն այնքան ավելի համոզվում է նրանում, վոր իր ազատագրումը կապիտալիստների շահագործումից կարող է ձեռք բերել միայն ամբողջ կապիտալիստական կարգերի դեմ մղած պայքարում, և միայն այդ դասակարգի տապալումից հետո, այլ վոչ թե առանձին տերերիկապիտալիստների դեմ մղած պայքարի հետևանքով:

Այդպիսով, բանվոր դասակարգը կապիտալիստական հասարակակարգում ունեցած իր գոյության բոլոր պայմաններով առաջադրվում է վորպես ամենից հեղափոխական դասակարգ, վորը շահագրգռված և պատրաստված է կապիտալիստական հասարակակարգի դեմ վճռական և հետևողական պայքար մղելու համար: Բանվոր դասակարգը պայքարում է բուրժուական հասարակակարգի

տապալման և նոր սոցիալիստական հասարակարգ կառուցելու համար, հասարակարգ, վորտեղ չի լինելու արտադրական միջոցների մասնավոր սեփականություն, կվերանան դասակարգերը, մարդը չի ճնշի մարդուն, կվերանա հակադրությունը քաղաքի և գյուղի միջև:

Կապիտալիզմի դեմ մղած պայքարում գյուղացիությունը հայտաբերում է ավելի քիչ վճռականություն, կայունություն և հետևողականություն, քան բանվոր դասակարգը:

«Գյուղացիությունը,—ասում է Լենինը,—չի միավորված խոշոր ձեռնարկություններում, այլ կոտորակված է մանր մեկուսացված տնտեսատիրություններում: Գյուղացիները չեն տեսնում իրենց հանդեպ այնպիսի աշխարհ, բացորոշ միասնական թշնամու, ինչպես բանվորները—կապիտալիստին: Ահա թե ինչու գյուղացիական չքավորության վողջ մասսան և բոլոր յերկրներում ել՝ ազատության և սոցիալիզմի ոգտին մղվող պայքարում ավելի պակաս կայուն գտնվեց, քան բանվորները»:

Միջակ գյուղացին ապրում է իր աշխատանքով, վարձու աշխատանքի գլխավոր չափազանց քիչ, վորպես բացառություն: Այդ հանգամանքը աշխատավոր միջակ գյուղացիությունը միացնում է պրոլետարիատին, կազմում է բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի հիմքը: Բայց միևնույն ժամանակ միջակ գյուղացիներն ունեն իրենց արտադրական միջոցները (հող, լճկան, գյուղատնտեսական գործիքներ) և ապրում են վոչ թե ծախելով իրենց բանվորական ուժը, այլ ծախելով իրենց տնտեսության մթերքները: Այդպիսով միջակ գյուղացին մի կողմից—աշխատավոր է, մյուս կողմից—մանր-սեփականատեր: Միջակ գյուղացու այդ «յերկու հոգին» հանդիսանում է պատճառն այն բանի, վոր նա տատանվում է բանվոր դասակարգի և բուրժուազիայի միջև:

Հեղափոխական պայքարի պատմությունը ցույց է տալիս, վոր կալվածատերերի և կապիտալիստների դեմ տեղի ունեցած գյուղացիական մասսաների ինքնուրույն հեղափոխական յելույթները անփոփոխ պարտություն են կրել գյուղացիության աշխատավորական մասսաների ցրվածության պատճառով, իրեն մանր սեփականության հետ կապված լինելու պատճառով, բավականաչափ կայունություն և հետևողականություն չունենալու պատճառով: Միայն բանվոր դասակարգի ղեկավարությամբ, միայն կապիտալիզմի դեմ վճռաբար մարտնչող այդ դասակարգի ղեկավարությամբ, խորհրդային Միության գյուղացիությունը ազատագրվեց կալվածատերերի և կապիտալիստների լծից:

2. ԿՈՒՍՍ.ԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՌԱՋԱՎՈՐ ԶՈՒՍՏՆ Ե

Կապիտալիստների դեմ մղվող պայքարի ընթացքում պրոլետարիատը ստեղծում է իր դասակարգային կազմակերպությունները (արհմիություններ, իշխանության համար անմիջական պայքար մղելու ժամանակաշրջաններում—խորհուրդներ, կոմունիստական յերիտասարդական միություն, կուսակցություն): Այդ կազմակերպություններից գլխավորը հանդիսանում է բանվոր դասակարգի քաղաքական կազմակերպությունը—կուսակցությունը: Պրոլետարիատի միակ կուսակցությունը, վորը իրոք պայքարում է նրա շահերի համար, հանդիսանում է միայն կոմունիստական կուսակցությունը: Նա ղեկավարում է բանվոր դասակարգի պայքարը, կազմակերպում է պրոլետարիատին, միաձուլում նրան, բանվորների առաջ բացում կապիտալիստների քաղաքականության իսկական իմաստը, մերկացնում բանվոր դասակարգի մեջ բուրժուազիայի գործակալությունը—

սոցիալ-ֆաշիստներին, տանում ե նրան դեպի պրոլետար-
իատի դիկտատուրայի համար մղվող պայքարը, դեկավա-
վում ե նրա ստեղծագործական աշխատանքը սոցիալիս-
տական շինարարութեան բնագավառում:

Ինչո՞ւ բանվոր դասակարգին պետք ե կուսակցութուն:
Բանվոր դասակարգը իր կազմով միատարր չե: Հին պրո-
լետարները հետ միասին, պրոլետարներ, վորոնք ունեն
դասակարգային պայքարի մեծ փորձ, բանվոր դասակարգը
իր շարքերն ե ընդունում նաև գյուղից նոր-նոր դուրս
յեկած, հողի հետ կապ պահպանող, գյուղում իր տնտե-
սութունն ունեցող բանվորներ: Խոշոր քաղաքներում
տեղավորված մեծ գործարանների բանվորութեան հետ
միասին, բանվորութուն, վորն ունի հեղափոխական դա-
սակարգային պայքարի մեծ փորձ, կան բանվորներ,
վորոնք ապրում են խուլ անկյուններում, աշխատում են
մանր ձեռնարկութուններում, վորոնք քաղաքականապես
հետամնաց են և միշտ դասակարգայնորեն բավարար գի-
տակից չեն: Վերջապես կապիտալիստական յերկրներում
կան վերնախավեր, լավ վարձատրվող բանվորական խմբեր,
վորոնք շատ դեպքերում գնում են իրենց տերերի յետևից:
Այդ վերնախավից դուրս են գալիս բանվոր դասակարգի
շահերի դավաճաններ—սոցիալ-ֆաշիստական դեկավարներ:
Այդպիսով, կապիտալիստական յերկրներում բանվորների
մի մասը կամ բավարար գիտակից չլինելուց կամ բարձր
աշխատավարձով կաշառված լինելով—գտնվում ե բուր-
ժուազիայի ազդեցութեան տակ: Իր ազդեցութունը բան-
վորների վրա տարածելու գործում բուրժուազիան ունի
իր հավատարիմ ոգնականներին և գործակալներին՝
հանձինս սոցիալ-ֆաշիստական կուսակցութունների:

Ահա թե ինչու անհրաժեշտ ե, վորպեսզի բանվոր
դասակարգի ամենից առաջավոր մասը, վոր պարզորոշ

դիտակցում ե կապիտալիզմի տապալման և սոցիալիս-
տական հասարակարգի կառուցման անհրաժեշտութունը,
միավորի բանվոր դասակարգը, պայքարի բանվորական
առանձին խավերում յեղած բուրժուական ազդեցութեան
դեմ, դեկավարի կապիտալիզմի դեմ մղվող պրոլետարիատի
պայքարը և գլխավորի սոցիալիստական շինարարութեան
բնագավառում տարվող նրա աշխատանքը: Բանվոր դասա-
կարգի անձնագոհ առաջավոր մարտիկների միավորումը—
կոմունիստական կուսակցութունն ե: Մեզ մոտ, Խորհրդային
Միութեան մեջ այդպիսի կուսակցութուն հանդիսանում ե
Համամիութենական կոմունիստական կուսակցութունը
(բոլշևիկները):

«Պրոլետարիատի դիկտատուրան,—գրել ե Լենինը,—
արյունալից և անարյուն, բռնի և խաղաղ, ռազմական և
տնտեսական, մանկավարժական և վարչական համառ մի
պայքար ե հին հասարակութեան ուժերի և տրադիցիա-
ների դեմ... առանց պայքարում կոփված յերկաթե կու-
սակցութեան, առանց կուսակցութեան, վորն ոգտվում ե
տվյալ դասակարգի վողջ ազնիվ մասի վստահութեամբ,
առանց կուսակցութեան, վոր կարողանում ե հետևել մաս-
սայի տրամադրութեանը և ներգործել նրա վրա, այդպիսի
պայքար հաջող վարել անհնար ե»:

Ուրիշ յերկրներում կոմունիստական կուսակցու-
թունների հետ միասին կան և այլ կուսակցութուններ,
վորոնք իրենց կոչում են բանվորական: Սակայն, մինչ
կոմունիստական կուսակցութունները անհաշտ պայքար են
մղում բուրժուազիայի դեմ, այդ կուսակցութունները
(սոցիալիստական, սոցիալ-դեմոկրատական) բանվորա-
կան են հանդիսանում միայն անունով, գործով նրանք—
բուրժուազիայի անմիջական գործակալներն են բանվոր

սոցիալիստական շինարարութեան ղեկավարութեան փորձի վրա, փորձ, վորն իր հավասարը չունի պատմութեան մեջ:

Այդ ամենը միասին վերցրած բացատրում ե, թե ինչու մեր կուսակցութեանը մշակել ե իր մեջ այնպիսի հատկութիւններ, վորոնց շնորհիվ նա հանդիսանում ե ամենաուժեղ, որին ահ ելի Կոմունիստական կուսակցութեանը, որին ահ ե ծառայում մյուս Կոմունիստական կուսակցութիւնների համար, հանդիսանում ե Կոմունիստական Իստեբնացիոնալի առաջնորդը:

Կուսակցութեան իր աշխատանքում միշտ ղեկավարվում ե բանվոր դասակարգի պայքարի վերջնական նպատակներով: Յուրաքանչյուրի աշխատանքը նա կառուցում ե այնպես, վորպեսզի արագացնի սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում: Կուսակցութեանը միշտ յելնում ե վողջ բանվոր դասակարգի շահերից, վորոնց պետք ե յենթարկվեն բանվորների առանձին խմբերի շահերը: «Մեր կուսակցութեանը,—ասում ե Լենինը,—գիտակից, առաջավոր մարտիկների միութեան ե բանվոր դասակարգի ազատագրման համար»:

Դրան վոչ մի չափով չի հակասում այն հանգամանքը, վոր կուսակցութեան շարքերում կան վոչ միայն բանվորներ, այլև գյուղացիներ ու ծառայողներ: Այսպես, առ 1-ն ապրիլի 1930 թ. Համկոմկուսն ունեցել ե 1.852.090 անդամներ ու թեկնածուներ, նրանցից բանվորներ—68,2⁰/₀, դրանց թվում—48,6⁰/₀ արտադրական բանվորներ: Կուսակցութեան հիմնական կորիզը—այդ բանվորներն են: Կուսակցութեանը վարում ե ուժեղ աշխատանք գիտակից և ակտիվ բանվորների նոր շերտեր իր շարքերը ներգրավելու ուղղութեամբ: Կուսակցութեան բանվորական մասը—ամենից կայունն ե: Կուսակցութեան մեջ բանվորների (ինչպես քաղաքային, այնպես ել գյուղատնտեսական)

քանակի մշտական մեծացումը հանդիսանում ե կուսակցութեան շարքերի միասնութեան և պրոլետարիատի պայքարի և սոցիալիզմի շինարարութեան ղեկավարման վողջ աշխատանքի հաջողութեան ամենագլխավոր պայմաններէց մեկը: Բանվորներից բացի կուսակցութեան մեջ ընդունվում են գյուղացիներից (չքավորներից և միջակներէց) և ծառայողներից միայն նրանք, վորոնք լիովին և ամբողջապես պաշտպանում են բանվոր դասակարգի գործը, պայքարում սոցիալիզմի համար: Առաջին հերթին ընդունվում են գյուղացի-կոլխոզնիկները, վորոնք հանդիսանում են բանվոր դասակարգի ամուր հենարանը գյուղում, և ծառայողներից (գիտնականներ, ինժեներներ, ուսուցիչներ) նրանք, վորոնք գործով ոգնում են բանվոր դասակարգին սոցիալիզմ կառուցելու:

3. ԿՈՒՍՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԵՐ—ԲՈՒՈՐ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՂԵԿՎՎԱՐՆ Ե

Լինելով բանվոր դասակարգի կուսակցութեան, Համկոմկուսը կազմակերպում և ղեկավարում ե վոչ միայն բանվոր դասակարգի, այլև աշխատավորների վողջ մասսայի պայքարը: Վորովհետև կապիտալիզմի տապալման և սոցիալիստական հասարակարգի կառուցման մեջ շահագրգռված են վոչ միայն բանվոր դասակարգը, այլև աշխատավորների ամբողջ մասսան: Դրա մեջ ե կայանում բանվորների ամբողջ մասսան: Դրա մեջ ե կայանում բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիութեան դաշինքի հիմքը, դաշինք, վորի մեջ ղեկավար դերը պատկանում ե բանվոր դասակարգին: Առանց այդպիսի դաշինքի պրոլետարական հեղափոխութեան հաղթանակը անհնարին կլիներ:

Բոյլշևիկների կուսակցութեանը վոչ միայն ղեկավարել ե կալվածատերերի և կապիտալիստների դեմ մղած բանվոր դասակարգի պայքարը, այլև համախմբել ե բան-

վոր դասակարգի շուրջը բոլոր շահագործվողներին—և առաջին հերթին բազմամիլիոն գյուղացիութեանը: Յարին, կալվածատերերին և կապիտալիստներին տապալելուց հետո, քաղաքիական պատերազմում հաղթանակը տանելուց հետո, բանվոր դասակարգի և նրա առաջավոր շնորհա մունիստական կուսակցութեան առաջ կանգնեցին յերկրի սոցիալիստական շինարարութեան ղեկավարման խնդիրներ: Սոցիալիստական հասարակակարգի լիակատար կառուցումը պահանջում է վոչ միայն արդյունաբերութեան զարգացում ու վերակերտում, այլև վողջ գյուղատնտեսութեան վերակառուցում՝ սոցիալիստական հիմունքներով: Գյուղացիութեան հիմնական մասան—չքավորներն և միջակները,—նույնպես շահագրգռված են նոր սոցիալիստական հասարակակարգի կառուցման գործի մեջ, վորովհետև կապիտալիզմի որով նրան սպասում է անխուսափելի քայքայում և աղքատութիւն: Համկոմկուսը, կենսագործելով պրոլետարիատի խնդիրները, դրա հետ միասին պաշտպանում է գյուղացիութեան հսկայական մեծամասնութեան իսկական շահերը:

Կուսակցութիւնը սերտորեն կապվում է լայն անկուսակցական մասաների հետ, ուշիմ ունկնդրում է նրանց ձայնին և հաշվի առնում այն իր կուսակցական համագումորներում սոցիալիստական շինարարութեան կարևորական աշխատանքների ընթացքում: «Իրկատտուրան կենսագործում է խորհուրդներում կազմակերպված պրոլետարիատը»: «Կուսակցութիւնն իր աշխատանքում անմիջականորեն հենվում է արհեստակցական միութիւնների վրա»: «Ընդհանուր առմամբ և լիովին ստացվում է ձեռնարկներն վոչ կոմունիստական, ճկուն և համեմատաբար ընդլայնված, չափազանց հզոր, պրոլետարական ապարատ, վորի

միջոցով կուսակցութիւնը կապված է դասակարգի հետ և մասսայի հետ և վորի միջոցով կուսակցութեան ղեկավարութեամբ կենսագործվում է դասակարգի ղեկատտուրան»: (Լենին—«Չախութեան մանկական հիվանդութիւնը կոմունիզմի մեջ»):

Իր ղեկավարութիւնը բանվորների և գյուղացիների մասսայական կազմակերպութիւններին նկատմամբ—խորհուրդներ, արհեստակցական միութիւններ, կոոպերացիա, փոխադարձ ոգնութեան կոմիտե և այլն,—կուսակցութիւնը կենսագործում է այդ կազմակերպութիւններում աշխատող իր անդամների միջոցով: Մասսայական անկուսակցական կազմակերպութիւններում աշխատող կուսակցութեան անդամները ստեղծում են իրենց կոմունիստական ֆրակցիաները: Այդ ֆրակցիաներն իրենց աշխատանքների ընթացքում ցուցումներ են ստանում կուսակցութիւնից և նրա կոմիտեներից: Ֆրակցիաներ ստեղծվում են նաև բոլոր համագումարներում, կոնֆերենցիաներում և ժողովներում, վորտեղ միատեղ մասնակցում են կոմունիստներն և անկուսակցականները: Կուսակցութիւնը պահանջում է իր բոլոր անդամներից, վորոնք աշխատում են բանվորների և գյուղացիների մասսայական կազմակերպութիւններում, վորպեսզի նրանք կիրառեն ուղիղ կուսակցական գիծ:

Կուսակցական ղեկավարութիւնը անկուսակցական աշխատավորական մասաների նկատմամբ հիմնված է դեպի կուսակցութիւնը տածած այդ մասսաների վստահութեան վրա,—մասսաներ, վորոնք կուսակցութիւնը ղեկատում են վորպես իրենց քաղաքական ղեկավար,—և այն համոզման վրա, վոր ճիշտ է կուսակցութեան վարած քաղաքականութիւնը: Այդ վստահութիւնը—բանվոր դասակարգի գործի համար կուսակցութեան մղած յերկարատև

պայքարի արդյունքն է: Այդ պայքարի փորձի վրա պրո-
լետարիատը և գյուղացիութեան ճնշող մասսան համոզվել
են, վոր միայն Համկոմկոմի ղեկավարութեամբ և խոր-
հրդաշին յերկիրը ամրապնդել հեղափոխական նվաճում-
ները և հաջող կառուցում և սոցիալիզմ, և վոր կոմունիս-
տական կուսակցութեանը—այդ բանվոր դասակարգի առա-
ջավոր շնկատն է, պրոլետարիատին նվիրված մարտիկներ
լավագույն շնկատը, վորը անձնվեր պաշտպանում և իր
դասակարգի և աշխատավորների ամբողջ մասսայի շահերը:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՍՑԻՊԼԻՆԱՆ ՅԵՎ ՄԻՕՍՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կուսակցութեանը կարող է հաջող կատարել իր խըն-
դիրները բանվոր դասակարգի և ամբողջ աշխատավորու-
թեան ղեկավարման ուղղութեամբ—միայն իր շարքե-
րում սերտ միաձուլութեան, միասնականութեան և խիստ
զիսցիպլինա ունենալու դեպքում: Այդ կանոնները բոյլ-
ջեիկյան կուսակցութեանը պահպանել և ցարի և բուրժու-
ազիայի դեմ մղած իր պայքարի ամբողջ ժամանակաշրջ-
անում: Հատկապես կարևոր նշանակութեուն են ձեռք
բերել այդ կանոնները բանվոր դասակարգի կողմից իշխա-
նութեանը նվաճելուց հետո, յերբ մեր կուսակցութեանը
դարձել է կառավարման կուսակցութեուն: Խորհրդային
միութեանը շրջափակված և կապիտալիստական պետու-
թեանների թշնամական ողակով: Մեր թշնամիները փոր-
ձում են զանազան միջոցներով խեղդել սոցիալիստական
պետութեանը: Խորհրդային Միութեան ներսում նրանք
ունեն դաշնակիցներ հանձինս պարտված, սակայն վերջ-
նականապես չջախջախված կուլակները և նեպմանները,
վորոնք կատարի դիմադրում են բանվոր դասակարգի ծա-
վալուն սոցիալիստական հարձակմանը:

Գյուղատնտեսութեան համատարած կոլեկտիվացման հի-
ման վրա կուլակութեանը վորպես դասակարգ լիկվիդացիայի
յենթարկելու քաղաքականութեանը, վորը տարվում է բան-
վոր դասակարգի կողմից կոմունիստական կուսակցութեան
ղեկավարութեամբ, բնականաբար ուժեղացնում է մի քանի
անգամ մեր դասակարգային թշնամիների պայքարն ընդդեմ
խորհրդային իշխանութեան միջոցառումների, վորովհետև
այդ միջոցառումները նշանակում են նրանց անխուսա-
փելի վերջը: Կուլակները և նեպմանները զանազան ճա-
նապարհներով տարածում են իրենց ազդեցութեանը նաև
կուսակցութեան առանձին՝ պակաս կայունութեուն ունե-
ցող անդամների վրա: Դիմադրել այդ ազդեցութեանը,
հաջողութեամբ կատարել իր հսկայական խնդիրները տաս-
նյակ միլիոնավոր աշխատավորներին ղեկավարելու բնա-
գավառում կուսակցութեանը կարող է, միայն պահպանե-
լով գաղափարական միաձուլութեուն, յերկաթե զիսցիպլ-
լինա և իր շարքերի խստագույն միասնականութեուն:
Յերկաթե զիսցիպլինան, վոր հիմնված է կուսակցու-
թեան բոլոր անդամների կողմից կուսակցութեան ղեկա-
վար որդանների վորոշումներին անպայման յենթարկ-
վելու վրա, հանդիսանում է կուսակցութեան ամբողջական—
իսկ այդ նշանակում է և պրոլետարիատի ղեկատուութեան ամ-
բողջական—կարևորագույն պայմաններից մեկը: Այն մեծ
նշանակութեունը, վորպիսին տվել է Լենինը կուսակցութեան
զիսցիպլինային և միասնականութեանը, յերևում է նրա
«ո՞վ թեկուզ վորևե չափով թուլաց-
հետևյալ խոսքերից. — «ո՞վ թեկուզ վորևե չափով թուլաց-
նում է պրոլետարիատի կուսակցութեան յերկաթե զիսցիպլ-
լինան, հատկապես նրա (պրոլետարիատի) ղեկատուութեան
ժամանակ, նա փաստորեն ոգնում է բուրժուազիային՝
ընդդեմ պրոլետարիատի»:

6277
6279



Մեր կուսակցութեան բոլոր շնորհիւյան միասնականութիւնը հիմնված է պրոլետարիատին խորթ ամեն տեսակի հայացքներէի և հոսանքներէի դեմ վճռական պայքար մղելու վրա, գաղափարական անհաշտեցողութեան վրա: Պայքարել և հաղթանակել կարող է միայն այն կուսակցութիւնը, վորը ղեկավարվում է միասնական կամքով, միասնական նպատակներով. մեր կուսակցութեան գաղափարական հիմունքը— Մարքսի և Լենինի ուսմունքն է: Յեւ կուսակցութիւնը թույլ տալ չի կարող և թույլ չի տալիս մագաչափ անգամ նահանջ այդ գաղափարական հիմունքից:

Իր բազմամյա ամբողջ պատմութեան ընթացքում բոլոր շնորհիւյան կուսակցութիւնը մղել է անխնայ պայքար գանազան համաձայնողական կուսակցութիւններէի և խմբերէի դեմ, այլ և իր սեփական շարքերում հանդես յեկող թեքումներէի դեմ: Մինչհեղափոխական շրջանում կուսակցութիւնը ամենից համառորեն պայքարել է մենշևիկներէի դեմ, վորոնք հանդիսանում էին բուրժուազիայի ազենտուրան բանվոր դասակարգի մեջ, վորոնք հրում էին պրոլետարիատին դասակարգային պայքարից հրաժարվելու ճանապարհը, մարքսիզմի հեղափոխական պրոլետարական թեորիայից հրաժարվելու ճանապարհը:

Բանվոր դասակարգի շահերի այդ դավաճաններին կուսակցութիւնը տվել է արժանի հակահարված:

Վերջին տարիներէի ընթացքում կուսակցութիւնը հատկապէս ուժեղ պայքար է մղել տրոցկիզմի դեմ և ներկա փուլում գլխավոր վտանգ դարձած աջ թեքման ու դեպի այդ թեքումները ցուցաբերվող հաշտվողականութեան դեմ: Կուսակցութիւնը ջախջախեց տրոցկիստներին, վորոնք այժմ վեր են ածվել բացարձակ հակահեղափոխականներէի, պրոլետարական պետութեան յերդվյալ թշնամիներէի,— և աջ ոպողիցիոններններին, այդ կուլակային աջակիցներին,

վորոնք կուսակցութեանը կոչ էյին անում խաղաղութիւն պահպանել կուլակի դեմ, զիջումներ անել կապիտալիզմին:

Կուսակցութեան 16-րդ համագումարը աջ ոպողիցիայի հայացքները կուսակցութեան պատկանելիութեան հետ անհամատեղելի համարեց:

Գլխավոր գծի մաքրութեան ոգտին, հակալենինյան հոսանքներէի և խմբավորումներէի դեմ մղած այդ մարտերում կուսակցութիւնը աճել և ամրապնդվել է, կուլ ու սրել է իր գաղափարական զենքը: Մաքրվելով փթած համաձայնողական տարրերից և իր դրոշի տակ հավաքելով բանվոր դասակարգի գործի համար, լենինիզմի համար լավագույն մարտնչողներին, կուսակցութիւնը դրանով իսկ ամրապնդել է և ամրապնդում է իր միասնութիւնը, մարտունակութիւնը և լենինյան միասնականութիւնը: Այդ— կուսակցութեան մեջ յերկաթե դիտցիպլինայի, իսկ հետեւեալ և պրոլետարական դիկտատուրայի գոյութեան պահպանման գլխավոր պայմանն է:

ՋՐՈՒՅՑ ՅԵՐԿՐՈՐԴ

ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ 1905 ԹՎԻ ՀԵՂԱՓՈՒՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հեղափոխական շարժումը 1905 թվի նախորդին: Վրա համարող հեղափոխութունը և նրա զնահատականը բոլորեցին ու մենշեվիկները կողմից: Կուսակցության տակտիկայի ստուգումը հեղափոխության ընթացքում: 1905 թվի հեղափոխության պարտությունը և սեպտեմբերի շրջանը:

1. ՀԵՂԱՓՈՒԹՅԱՆ ՇԱՐՇՈՒՄԸ 1905 ԹՎԻ ՆԱԽՈՐԵՅԻՆ

1930 թվին լրացավ 1905 թվի հեղափոխության 25-ամյակը: 1905 թվի հեղափոխությունը—կարևորագույն մի փուլ է բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության հեղափոխության պայքարում: Յուրաքանչյուր բանվոր, յուրաքանչյուր աշխատավոր պետք է լավ ուսումնասիրի 1905 թվի հեղափոխության դասերը, հեղափոխության, վորը կենսինը անվանել է «հոկտեմբերի գլխավոր փորձը»:

1900-ական թվականներին ցարական Ռուսաստանը ապրել է դաժան արդյունաբերական ճգնաժամ, վորն առաջացրել էր բանվոր դասադարգի և աշխատավորական լայն մասսաների տնտեսական դրուժյան խիստ վատթարացում: Այդ շրջանը բնորոշ է արդյունաբերության մեջ տեղի ունեցած մի շարք մասսայական տնտեսական գործադուլների, վորոնք մի շարք դեպքերում վեր են ածվում ցարիզ-

մի դեմ ուղղված քաղաքական յեղույթների: Գործադուլային պայքարի ընթացքը ավելի և ավելի համոզում է բանվորներին նրանում, վոր պրոլետարիատի տնտեսական իսկական ազատագրումը կապիտալիստական ստրուկտյունից անհնար է առանց ամենադաժան քաղաքական պայքար մղելու ցարիզմի դեմ: 1901—1902 թ. թ. ուսանողության քաղաքական ցույցերին արդեն մասնակցություն են ցույց տալիս բանվորների հսկայական մասսաներ, վորոնք ավելի և ավելի ներգրավվում են միապետության դեմ մղած քաղաքական պայքարի շրջապտույտի մեջ: 1901 թվի (մայիսի 20-ին) տեղի յե ունենում հայտնի որուխտվյան գործադուլը, և համարյա նրա հետ միաժամանակ բանվորական ցույցը Ռոստովում, վորը վերջանում է բանվորների՝ ցարական վոստիկանությունների և բանակի դեմ ուղղված պայքարով: Այնուհետև տեղի յեն ունենում քաղաքական բանվորական յեղույթները Բազվում, Վիլնոյում, Սարատովում, Սորմովում: 1901 թվի կեսերին Ռուսաստանի հարավային նահանգներում քաղաքական ցույցերն ընդգրկել են 200.000-ից ավելի բանվորներ: Այդ տարվա վերջին գործադուլների ալիքը, վորպես ասոելը փոթորիկանցում է Բազվի նավթարդյունաբերության վրայով, Թիֆլիսում, Բաթումում, Կիյևում, Յեկատերինոսլավում, Կերչում և այլ վայրերում:

Այդ գործադուլները հետևանք էյին բանվոր դասակարգի անտանելի տառապանքների, վոր առաջ էյին յեկել արդյունաբերական ճգնաժամից և ուսական պրոլետարիատի քաղաքականապես իրավագուրկ վիճակից: Բանվորական որը ֆաբրիկաներում և գործարաններում որական հասնում էր 12—15 ժամի, միջին աշխատավարձը տարեկան 215 ռուբլուց այն կողմը չեբ անցնում, արտաժամյական 215 ռուբլուց այն կողմը չեբ անցնում բանաշխատանքների սխտեմը էլ ավելի յեբ մեծացնում բան-

վորական որվա տեղությունը ձեռնարկություններում: 1905 թվի հեղափոխության նախորդին, արդյունաբերական ճգնաժամի տարիներին գործադուլային շարժման աճումը արտահայտվում է հետևյալ թվերով.— 1900 թվին գործադուլ են արել 29,389 բանվորներ, 1901 թվին— 32,218 բանվորներ, իսկ 1902 թվին— 36,670 բանվորներ: Այդ թվերը, սակայն, չեն պատկերավորում լիովին այն ժամանակվա բանվորական շարժման հիմնական մոմենտները— տնտեսական պայքարից քաղաքական յեղույթներին անցնելու մոմենտները: Իսկ դրանք հատկապես վառ արտահայտվեցին մայիս մեկյան հզոր ցույցերում, վորով պահանջվում էր ութ ժամյա բանվորական որ և քաղաքական ազատություններ: Մեր բանվորական շարժման մեջ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները ցույց են տվել ամենագործոն մասնակցությունը: «Իսկրա» լրագիրը, վոր հրատարակվում էր արտասահմանում Լենինի ղեկավար մասնակցությամբ, կազմակերպում է բանվորների լայն մասսաները միապետության դեմ պայքարելու համար, ջախջախում է «եկոնոմիզմը», վորը բանվոր դասահանջներին «առանց միջամտելու քաղաքականությանը», վորով իբր թե պիտի զբաղվեր միայն բուրժուազիան:

Հեղափոխական սոցիալ-դեմոկրատները հրատարակեցին հազարավոր թուղթիկներ, կազմակերպեցին մայրվկաներ, ղեկավարեցին գործադուլները, ամեն կերպ աշխատելով կազմակերպել բանվոր դասակարգը սոցիալիզմի համար մարտնչելու դրոշի տակ, բանվորական շարժումը դնել մասայական կազմակերպված քաղաքական պայքարի հունի մեջ:

1903 թիվը յեղել է հսկայական գործադուլային շարժման մի շրջան, շարժում, վորին արդեն մասնակցում են խոշորագույն ֆաբրիկաների և գործարանների հարյուր հա-

զարավոր բանվորները: Մի քանի ձեռնարկություններում բանվորները շարժում էին միապետության տապալման լողուններ, իսկ այդ նշանակում էր, վոր բանվորական շարժումը քանի գնում ամուր կանգնում էր քաղաքական պայքարի ճանապարհի վրա, դեն շարժելով «եկոնոմիստներին» պայքարի քարոզները— «հինգ կոպեկի համար, այս-որվա որի համար»: Միջուրդը միշտ ավելի և ավելի յեշիկանում, հեղափոխական տրամադրությունները ընդգրկում են նոր հարյուր հազարավոր բանվորների և շահագործվող աշխատավորական մասսաների:

Քաղաքներում բանվորական շարժման աճման հետ միաժամանակ, 900-ական թվականների սկիզբը նշվում է և գյուղացիական շարժման վերելքով: 20-րդ դարի սկիզբը Ռուսաստանի համար բնորոշ էր ամենից առաջ գյուղատնտեսական միջերջների արտահանման ուժեղացումով (միայն հաց տարեկան արտահանվում էր մինչև 8 միլիոն տոնն):

Այդ արտահանման մեջ անչափ շահագրգռված կալվածատերերը անասելի չափերով բարձրացնում են հողի կապալավարձը, դրանով իսկ ուժեղացնելով սակավահող գյուղացիության ստրկությունը և անխնա շահագործելով հողագուրկ բատրակներին մասսաներին: Շատ հաց վաճառելու և գյուղացիներին անխնա շահագործելու ձգտումը կալվածատերերի մեջ առաջ է բերում ուժեղ ցանկություն գյուղում պահպանելու համար 1861 թվի «գյուղացիական ռեֆորմից» հետո դեռ ևս վողջ մնացած կիսաճորտատիրական հարաբերությունները:

Ամբողջ լավ հողը գտնվում էր կալվածատերերի ձեռքում: Սակավահողությունը արգելակ էր գյուղացիական տնտեսության զարգացման համար: Դրան անհրաժեշտ է ավելացնել գյուղացիների «յետաշխարի» սխտեմը, յերբ նրանք

կալվածատիրոջ դաշտում աշխատում էյին վորպես կալվածավարձի հատուցում: «Յետաշխարի» սիստեմը հանդիսացել է գյուղացիների դեպի իրենց դարավոր թշնամին՝ դեպի կալվածատերը տածած դասակարգային ատելության ամենագլխավոր պատճառներից մեկը:

Արդյունաբերական ճգնաժամը կրճատում է գյուղական ավելորդ բանվորական ուժի հոսանքը դեպի քաղաքները և ե՛լ ավելի մեծացնում գյուղացիության կարիքներն ու հոգսերը: Միաժամանակ արդյունաբերական ճրգնաժամը գործարաններից դուրս շարտելով գյուղի հետ դեռ ևս սերտորեն կապված հազարավոր բանվորների, ուժեղացնում էր գյուղացիության հեղափոխական տրամադրությունները: Իր գյուղը վերադարձած բանվորը հաճախ հանդիսանում էր գյուղացիական շարժումների կազմակերպիչն այնտեղ:

Գյուղացու կիսաճորտատիրական դրությունը, ճորտատեր-կալվածատերերի իշխանությունը, մասսայական հողազրկությունը, սովը,— այդ ամենը պատճառ դարձան 20-րդ դարի առաջին տարիներում տեղի ունեցած գյուղացիական շարժումների վերելքին: Այսպես, 1900 թվին ամբողջ Յեվրոպական Ռուսաստանում յեղել են 48 գյուղացիական ապստամբություններ, 1901 թվին—50, 1902 թվին—340, 1903 թվին—141, 1904 թվին—91, իսկ 1905 թվին—670:

Հատուկ հզորությամբ աչքի ընկան գյուղացիական ապստամբությունները սևահողի շրջանում, վորտեղ ավելի ուժեղ էյին կալվածատերերի հալածանքները: 1902 թվին մասսայական գյուղացիական ապստամբությունները Պոլտավայի և Խարկովի նահանգում վերջացան կալվածատիրական կայքի ավերմամբ: Կալվածատերերի դեմ ուղղված գյուղացիների պայքարի գլխավոր միջոցներն էյին— կալվածատիրական ագարակների ավերելը, կայքի հըր-

կիցում, մարզերի և արոտատեղերի գրավում, անտառների կոտորում, կալվածատիրական պատրաստի բերքի գրավում, կալվածատերերի սպանությունը և այլն: Գյուղացիների հեղափոխական շարժման անուելի ծավալ էր նկատվում Վրաստանում, Մերձբայթիկում և Լեհաստանում: Միևնույն ժամանակ զարգանում էր և չքավորության պայքարը կուլակության դեմ, բայց այդ պայքարը թույլ էր կազմակերպված և նսեմանում էր վողջ գյուղացիության համար գլխավոր նշանակություն ունեցող խնդրով—կալվածատիրական հողատիրության դեմ մղած պայքարով, գյուղում գոյություն ունեցող կիսաճորտատիրական կարգերի դեմ մղված պայքարով: Գյուղացիական հուզումները դաժանորեն ճնշվում էյին ցարական կառավարության կողմից: Գնդակահարություններ, կոզակների պատժիչ շոկատներ, բանտ ու կախաղաններ—ահա թե ինչ էր բուռն թափով զարգացող գյուղացիական շարժման պատասխանը:

Մեր կուսակցությունն այն ժամանակ թույլ կապեր ուներ գյուղի հետ: Գյուղի հետ կապված էյին միայն առանձին հեղափոխական սոցիալ-դեմոկրատներ և սոցիալիստներն տրամադրված բանվորներ: Դրա հետ միասին, մեր կուսակցությունն արդեն այդ ժամանակ շեշտել է գյուղացության մեջ տարվող աշխատանքի ուժեղացման անհրաժեշտությունը, հենարան փնտրելով առաջին հերթին գյուղատնտեսական պրոլետարիատի և չքավորության մեջ: Առանձին հանրամատչելիություն էր վայելում Լենինի «Գյուղական չքավորությանը» անունը կրող փոքրիկ բըր-բույլը, վորի մեջ արդեն այն ժամանակ կիրառվում էր բույլը կիսակական գաղափարը—բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինքը՝ կալվածատերերի և կապիտալիստների դեմ պայքարելու համար:

Մասսայական բանվորական շարժումը քաղաքներում, տարերային գյուղացիական ապստամբությունները գյուղում, — 1905 թվի նախորդելի ամբողջ հեղափոխական պարագան ասում եր այն մասին, վոր վրա հասնող հեղափոխության մեջ հիմնական շարժիչ ուժերը կլինեն պրոլետարիատն ու գյուղացիութունը, ըստ վորում բանվոր դասակարգը կլինի հեղափոխության հեգեմոնը (առաջնորդը), ցարիզմի դեմ մղած հեղափոխական պայքարի ղեկավարը:

Բանվոր դասակարգի և գյուղացիության ծանր դրությունը ել ավելի վատթարացրեց ռուս-յապոնական պատերազմը, վոր սկսել եր ցարական կառավարությունը ռուսական բուրժուազիայի շահերի համար, վորը (բուրժուազիան) ձգտում եր ընդլայնել իր հարստությունները և իշխանությունը՝ Հեռավոր Արևելքում նոր հողեր գրավելու Սրտուրի անկումը և Ցուսիմայի տակ տեղի ունեցած ռուսական ծովային նավատորմի լիակատար կործանումը միապետության հանդեպ անբավականություն առաջ բերեցին նույնիսկ լիբերալ բուրժուազիայի նշանակալից մասի մեջ: Ցարական միապետության ռազմական անհաջողությունները շարժման մեջ դրին ժողովրդական մասսաներին: Միապետության տապալման համար մղվող հեղափոխական պայքարը հետզհետե դառնում եր նրանց հիմնական լոզունգը:

2. ՎՐԱ ՀԱՍՆՈՂ ՀԵՎԱՓՈՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԳՆԱՀԱՏԱԿՍՆԸ
ԲՈՅՆՇԵՎԻԿՆԵՐԻ ՅԵՎ ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Վրա հասնող հեղափոխության պայմաններում ռուսական սոցիալ-դեմոկրատիային անհրաժեշտ եր սահմանել իր վերաբերմունքը դեպի այդ հեղափոխությունը և վո-

րոշել իր տակտիկան: Այդ հարցերում բոլշևիկները և մենշևիկները միջև յերևան յեկան արմատական տարաձայնություններ, վորոնց աղբյուրները կարելի յեր հայտաբերել ղեռնս ՌՄԴԲԿ գոյության առաջին տարիներին:

1905 թվի ապրիլին Լոնդոնում տեղի ունեցավ կուսակցության III համագումարը: Մենշևիկները հրաժարվեցին մասնակցել նրան և կազմակերպեցին կոնֆերանս ժենևում:

Այդպիսով III համագումարը անցավ մեր կուսակցության պատմության մեջ, վորպես առաջին գնև բոլշևիկյան համագումար: Հենց այն փաստը, վոր III համագումարին զուգընթաց աշխատել ե մենշևիկյան կոնֆերանսը, ասում ե այն մասին, վոր բոլշևիկները և մենշևիկները տարաձայնությունները 1905 թվի հեղափոխության նախորդելի հասել եյին անսովոր սրության: Վրա իրապետության հանդեպ, յերբ անհրաժեշտ եր հասնող հեղափոխության հանդեպ, յերբ անհրաժեշտ եր վորոշել բանվորական կուսակցության տակտիկան գալիք պայքարում, Ռուսաստանում ըստ եյության արդեն կային յերկու կուսակցություններ, վորոնք տարբեր կերպով եյին գնահատում սպասվող հեղափոխության խնդիրները ու շարժիչ ուժերը, ունեյին յերկու տարբեր գծեր քաղաքական պայքարի հարցերում:

III բոլշևիկյան համագումարի և մենշևիկական կոնֆերանսի աշխատանքների ընթացքն ու վորոշումները ցույց տվին ամբողջ խորությունն այն տարաձայնությունների, այդ տարաձայնությունների վողջ անհաշտելիությունը, այդ տարաձայնությունների սոցիալ-դեմոկրատիայի յերկու սկզբունքահայտաբերեցին սոցիալ-դեմոկրատիայի յերկու սկզբունքորեն տարբեր տակտիկաներ գալիք հեղափոխության մեջ: Բոլշևիկները Լենինի գլխավորությամբ հեղափոխության կենտրոնական լոզունգ առաջադրեցին — զինված ապս-

տամբուլի տաճարի միջոցով ցարական միապետութեան տապալ-
լումը և ժամանակավոր հեղափոխական կառավարութեան
կազմակերպումը, կառավարութեան, վոր պիտի կազմված
լիներ հեղափոխական դեմոկրատիայի ներկայացուցիչնե-
րից, և վորի հիմնական խնդիրը պիտի դառնար ազրարա-
յին-գյուղացիական հարցի լուծումը (ճորտատիրութեան
մնացորդները լիկվիդացիա), վորպես միջոց դեմոկրատա-
կան հեղափոխութեանը սոցիալիստական հեղափոխութեան
վերածելու:

Ժամանակավոր հեղափոխական կառավարութեանը մաս-
նակցող հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի խնդիրը
կայանում է բանվոր դասակարգի շահերի պաշտպանու-
թյունը, հեղափոխութեան նվաճումների ամրապնդումը և
ընդլայնումը՝ զինված պրոլետարիատի վրա հենվելու
միջոցով: Ժամանակավոր հեղափոխական կառավարու-
թյունը, վորը հենվում է հեղափոխական ժողովրդի մեծա-
մասնութեան վրա և վորը ամբողջովին կենսագործում է
բուրժուական-դեմոկրատական հեղափոխութեան խնդիր-
ները (միապետութեան տապալում, կալվածատիրական հողի
կոնֆիսկացիա, 8 ժամյա բանվորական ուր), պետք է հան-
դիսանա պրոլետարիատի և գյուղացիութեան հեղափոխա-
կան-դեմոկրատական դիկտատուրայի արտահայտութեանը:

Այստեղից էլ բխել են և կուսակցութեան խնդիրները,
վորոնք հանգում են և կուսակցութեան խնդիրները,
վորոնք հանգում են և կուսակցութեանը բանվոր դասա-
կարգի ղեկավարութեամբ հեղափոխական ակտիվ պայքարի
մասնակից դարձնելուն և զինված ապստամբութեան գործ-
նական պատրաստութեանը:

Բուրժուազիային ցույց տրվելիք վերաբերմունքի հար-
ցում, բոյլընդիկները այն տեսակետին են, վոր բուրժու-
ազիան իր դասակարգային շահերի նույնութեամբ սերտո-
րեն կապված լինելով ցարիզմի հետ անխուսափելիորեն

պետք է միանա հակահեղափոխութեան բանակին: Յեթե
նա ժամանակավորապես պայքարում է ցարիզմի դեմ, ապա
միայն նրա համար է պայքարում, վորպեսզի միապետու-
թյանը ստիպի մի քանի զիջումներ անելու իր համար
(բուրժուական պարլամենտ, պատասխանատու մինիստ-
րություն, իր ներկայացուցիչները կառավարութեան մեջ
և այլն), բայց հենց վոր հեղափոխական շարժումը կթե-
վակոխի իր բարձրագույն աստիճանը և բանվոր դասակարգը
կսկսի կյանքում կիրառել իր դասակարգային ծրագիրը,
բուրժուազիան հեղափոխութեան դեմ դուրս կգա: Բոյլըն-
դիկները այդ տեսակետը լիովին արդարացի:

Միանգամայն այլ կերպ են նայում գալիք հեղափո-
խութեան վրա մենշևիկները: Նրանք համարում են, վոր
յեթե գալիք հեղափոխութեանը հանդիսանում է բուրժու-
ական հեղափոխութեան, ապա բուրժուազիան հանդիսա-
նում են նրա առաջնորդ (հեգեմոնը), գլխավոր շարժիչ ուժը:
Պրոլետարիատը պետք է խաղա «ձախ ոսկորիցիայի» դերը,
այսինքն լինի բուրժուազիայի հավելվածը, նրա հրիշխ: Ըստ
վորում, ինքը հեղափոխութեանը չպետք է դուրս գա բուր-
ժուական-դեմոկրատական կարգերի սահմանման շրջանակ-
ներից: Ժամանակավոր հեղափոխական կառավարութեան
մեջ մասնակցելու հարցի մասին մենշևիկները դատում են, ապա
այսպես, — յեթե հեղափոխութեանը բուրժուական է, ապա
բուրժուազիան կազմակերպում է կառավարութեան, իսկ
բանվոր դասակարգը չմասնակցելով կառավարութեան մեջ,
պետք է վերջինիս հրի դեպի սոցիալական ռեֆորմներ
ճանապարհը՝ «հատուկ ճնշում չգործադրելով նրա համար,
վորպեսզի չվախեցնի բուրժուազիային իր անչափ պա-
հանջներով»: Մենշևիկները նույնպես դեմ են յեղել զին-
ված ապստամբութեանը և ընդհանուր գործադուլին,
վորը բոյլընդիկների կարծիքով պետք է դառնա «պայքարի

միջոցներից մեկը», միջոց, վորը ունի «կարևոր նշանակու-
թյունն ապստամբութեան սկզբում և ընթացքում»: Մենշևիկ-
ները ամբողջովին ժխտեցին գյուղացիութեան հեղափոխա-
կան դերը ցարական միապետութեան դեմ մղած պայքարում:

Այսպիսով, բոլշևիկները և մենշևիկները մեջ կային
միանգամայն հակադիր տեսակետներ առաջիկա հեղափո-
խութեան ընթացքում բանվորական կուսակցութեան ունե-
նալիք տակտիկայի նկատմամբ: Յեթե բոլշևիկները III հա-
մագումարից անմիջապես հետո ձեռնարկեցին բանվոր դա-
սակարգի գործնական կազմակերպման և հեղափոխական
ապստամբութեան նախապատրաստման, յեթե նրանք մեր-
կացրին բուրժուազիայի հակահեղափոխութեան ելուժյունը,
ապա մենշևիկները կասեցրին պրոլետարիատի հեղափոխա-
կան ճնշումը այն պատրվակով, վոր իբր պրոլետարիատի
հեղափոխական յելույթները կվախեցնեն բուրժուազիային
և կստիպեն նրան բլոկ կազմել ցարիզմի հետ՝ ընդդեմ
պրոլետարիատի «չափազանց ծայրահեղ» պահանջների:

Մենշևիզմի տարատեսքն էր Տրոցկու տեսակետը: Տրոց-
կին վերհանեց այսպես կոչվող «պերմանենտ հեղափոխու-
թեան» թեորիան, վորի ելուժյունը կայանում էր նրա-
նում, վոր միապետութեան տապալումից հետո միանգա-
մից իշխանութեան գլուխ կկանգնի բանվոր դասակարգը,
վորը կպահի իշխանութեանն իր ձեռքում միայն այն ժա-
մանակ, յերբ նրա կողմից իշխանութեանը գրավելուն կհե-
տևի հեղափոխութեանը մյուս յերկրներում: Պերմանենտ
հեղափոխութեան թեորիան նշանակում էր թերազնահա-
տել գյուղացիութեանը վորպես հեղափոխական ուժի, չվրս-
տահել պրոլետարիատի ուժերին և ընդունակութեաններին՝
գյուղացիութեանն իր յետևից տանելու գործում:

Տրոցկին հակառակ Լենինի պնդում էր, թե պրոլետա-
րիատը հեղափոխական պայքար մղելով և հեղափոխութեան

մեջ մասնակցելով իր՝ սոցիալիստական հասարակարգ
կառուցելու՝ ինքնուրույն գծով, անխուսափելիորեն կբախվի
գյուղացիութեան վողջ մասսայի հետ:

1905 թվի հեղափոխութեան նախորդին այսպես խորը
ջլատվում է ՌՄԻԲԿ, ըստ ելուժյան ներկայացնելով
իրենից յերկու կուսակցութեան—բոլշևիկները կուսակցու-
թյուն, վորը հանդիսանում էր պրոլետարիատի իսկական
առաջնորդը, և մենշևիկները կուսակցութեան (իր տրոց-
կիստական հավելուկով), վորը մանր-բուրժուազիայի շարժ-
ման շահերի արտահայտիչն էր, բուրժուազիայի ազդեցու-
թեան հաղորդիչը պրոլետարիատի շարքերում:

1905 թվի հեղափոխութեան ժամանակ, Լենինը, առա-
ջին շրջանում գտնվում էր արտասահմանում (ժընևում),
վորտեղից նամակների և «Պրոլետարի» թերթում տպվող
հոդվածների միջոցով ղեկավարում էր բոլշևիկները գոր-
ծունեյութեանը: Հոկտեմբերյան համաընդհանուր գործա-
դուլից և հոկտեմբերի 17-ի մանիֆեստի հրապարակումից
հետո Լենինը գալիս է Պետերբուրգ, վորտեղ ղեկավար
մասնակցութեան է ցույց տալիս «Նովայա ժիզն» լեզալ
բոլշևիկյան թերթին: 1905 թվի հեղափոխութեան շրջա-
նում Լենինը բազմիցս յելույթներ է ունեցել ժողովրդա-
կան ժողովներում և միտինգներում: «Նովայա ժիզն»,
«Վոլնա», «Վպերյոդ», «Եխո» թերթերում լույս տեսած
Լենինի ճառերն և հոդվածները յեղել են այն փաստա-
թղթերը, վորոնցով ղեկավարվել է մեր կուսակցութեանը
ցարիզմի և հակահեղափոխական բուրժուազիայի դեմ մղած
պայքարում:

1905 թվի հեղափոխութեան ժամանակ Լենինը ժամե-
ժամ ղեկավարել է մեր կուսակցութեան աշխատանքը, ուղ-
ղելով կուսակցութեան գործունեյութեանը դեպի իսկական
պրոլետարական ճանապարհը, դաժանորեն պայքարելով

մենչևիկյան-տրոցկիստական ուլորտյունիզմի դեմ, հեղափոխական ջանքերի 9-ի յերեկոյան իսկ, Պետերբուրգում տեղի ունեցած ցույցի գնդակահարումից հետո, կառուցել ե բարրիկադներ և զինված պայքար կազմակերպել ցարիզմի դեմ:

3. ԿՈՒՍՍԱԿՅՈՒԹՅԱՆ ՏԱԿՏԻԿԱՅԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ ՀԵՂԱՓՈՒՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅԳՈՒՄ

Միապետութեան դեմ ուղղված պրոլետարիատի մաստուլայման համար բանվոր դասակարգի մղած սայական հեղափոխական յերույթներն անմիջական զրդիչ պայքարի այդ առաջին քայլերը, Լենինն ասում ե այդ յեղել են 1905 թվի հունվարի 9-ի դեպքերը: Ցարական մասին, թե Պիտերի բանվորների սկսած շարժումը արպահնորդական բաժնի սպասովոր քահանա Գապոնի նաձագանք կգտնի ամբողջ յերկրում և կոչ ե անում կուխաձեռնութեամբ Պետերբուրգի բանվորները հսկայական սակցութեանը սկսել անմիջապես զինել բանվորներին և ցույցերով, խաչ ու խաչվառով, աղոթքներ յերգելով միավորել բոլոր հեղափոխական ուժերին ցարական կարգնում են ցարի մոտ որենք խնդրելու գործարանատերերի դեմ: Բանվորները փոխադրվում են ցարի մոտ որենք խնդրելու գործարանատերերի դեմ: Բանվորները կողմից դեպի ցարը տածած հավատը, վոր նա բանվորներին լինված պայքարով ցարիզմը տապալելու ճանապարհով: «փրկիչն» ե ճնշումից, կարիքից և շահագործումից,—այդ յայդ շրջանում ցարական կառավարութեանը ձեռնարկում ե հավատը վոչնչացվեց իրեն՝ ցարի կողմից, վորը հրամարի շարք մանյովրներ հեղափոխական վերելքը մարելու յում ե կրակել անգեն ամբոխի վրա: Ընդամենը սպանվում և վատակով: Ստեղծվում ե սենատոր Շիշլովսկու հանձնավիրավորվում են ավելի քան 2,000 մարդ: Մեր կուսակերտովը «բանվորական հարցի մասին»: Այդ հանձնաժողովի ցութեանը նախագգուշացրել եր բանվորներին, վոր Գամար լիազորներ ընտրելու ժողովները մեր կուսակցութեանը պոչինչ չի դուրս գա, վոր ցարը յյունն ոգտագործում ե իր ազդեցութեանը պրոլետարատի վրա ել ավելի ուժեղացնելու համար, պարզաբարում, վոր անհրաժեշտ ե վոչ թե «համաձայնութեան գալ Միապետութեան հետ զանազան հանձնաժողովներում, այլ ուսպալել այդ միապետութեանը»:

Այդպիսով արդեն նեպի առաջին 5 տարիները ցույց տվին, վոր նեպը հանդիսանում ե պրոլետարիատի՝ սոցիալիզմ կառուցելու իրոք ճիշտ քաղաքականութիւնը, ե վոր նրանք, ովքեր նեպի մեջ տեսել են միայն նահանջ կապիտալիզմի հանդեպ, նրանք վոչինչ չեն հասկացել նեպից: «Նեպը պրոլետարական պետութիւնների հատուկ քաղաքականութիւնն ե, վոր յենթադրում ե կապիտալիզմի հանդուրժում իշխող բարձրունքները պրոլետարական պետութեան ձեռքին դոնվելու դեպքում, յենթադրում ե կապիտալիստական ե սոցիալիստական տարրերի պայքար, յենթադրում ե սոցիալիստական տարրերի գերի աճումն ի վնաս կապիտալիստական տարրերի, յենթադրում ե սոցիալիստական տարրերի հողթանակը կապիտալիստական տարրերի նկատմամբ, յենթադրում ե դասակարգերի վոչնչացումն, սոցիալիստական եկոնոմիկայի հենարանի կառուցումն»

(Ստալին): Դրանում ե կայացել ե դրանում ե կայանում նեպի՝ վորպես դեպի սոցիալիզմ տանող հիմնական ճանապարհի՝ ելութիւնը:

3. ԿՈՒՍՏԱՆԿՑՈՒԹՅԱՆ 14-ՐԴ ՅԵՎ 15-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՅԵՐԿՐԻ ԻՆՂՆՈՒՍՏՐԻԱՅՄԱՆ ՅԵՎ ԳՑՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈՒՆԿՏՐԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

Այսպես կոչված վերականգնման շրջանի վերջում (1925 թ. դեկտեմբեր) կուսակցութիւնը 14-րդ համագումարին նշել ե դեպի սոցիալիզմը տանող մեր շարժման հետագա ուղիները, առաջադրել ե յերկրի ինդուստրիացման յենթարկելու լոզունգը, այսինքն անհրաժեշտ ե համարել ամեն կերպ զարգացնել սոցիալիստական ծանր արդյունաբերութիւնը, նրա համար, վորպեսզի Խորհրդային Միութիւնը «մեքենաներ ե կահավորանք ներմուծող յերկրից վերածվի մեքենաներ ե կահավորանք արտադրող յերկրի, վորպեսզի այդպիսով ԽՍՀՄ՝ կապիտալիստական շրջափակման պայմաններում բնավ չդառնա համաշխարհային կապիտալիստական սիստեմի հավելված, այլ ներկայացնի իրենից ինքնուրույն, սոցիալիստորեն վերակառուցվող միավոր» (Համկոմկուսի 14-րդ համագումարի բանաձևը):

Յերկիրը թեևակուրել ե սոցիալիստական շինարարութեան նոր շրջան—վերակառուցման շրջան, ամբողջ ժողովրդական տնտեսութեան սոցիալիստական վերակառուցման շրջան:

Վերջին տարիների ընթացքում այդ բնագավառում կուսակցութեան նվաճած նոր հաջողութիւնները ե՛լ ավելի ուժեղ բազա ստեղծեցին գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման համար ե ամրապնդեցին բանվոր դասակարգի ե գյուղական չքավորութեան ու գյուղացիու-

շերով և մեր ապրած խոշոր նշանակալից շրջանի համեմատ նշեց սոցիալիզմի համար մղվելիք հետագա պայքարնոր ամելի հոյակապ պլան: 16-րդ համագումարը յեղա՝ «ամբողջ ճակատով սոցիալիզմի բացազատված հարձակման, կուլակուլթյունը, վորպես դասակարգ, լիկվիդացիայի յենթարկելու և համատարած կոլեկտիվացումը կյանքում կիրառելու համագումար» (Ստալին):

Բացազատված սոցիալիստական հարձակում ամբողջ ճակատով,— ահա այն գլխավոր գծի էյուլթյունը, վոր նշե է 16-րդ համագումարը առաջիկա շրջանի համար:

5. ԲՈՅԼՇԵՎԻԿՑՄ.Ն ՀՍՐՁՍԿՄՍ.Ն ՊԼԱՆԸ

Ինչո՞ւմ է կայանում 16-րդ համագումարի նշած բոյլշիկյան հարձակման պլանը:

Ամենից առաջ 16-րդ համագումարը մատնանշեց, վոր վճռական խնդիրը հանդիսանում է սոցիալիստական շինարարության թափերի արագացումը և առաջարկեց Կենտկոմին ապահովելու «ծանր արդյունաբերության, վորպես սոցիալիստական շինարարության հիմնական բազայի ամեն կերպ զարգացումը» (Կենտկոմի զեկուցման առթիվ ընդունված բանաձև): «Միայն մեր արդյունաբերության զարգացման թափի հետագա արագացումը հնարավորություն կտա մեզ տեխնիկական-տնտեսական տեսակետից հասնել և առաջ անցնել առաջավոր կապիտալիստական յերկրներին: Մարդիկ, վորոնք դուրս են տալիս մեր արդյունաբերության թափի իջեցման անհրաժեշտության մասին, հանդիսանում են սոցիալիզմի թշնամիներ, մեր դասակարգային թշնամիների գործակալներ» (Ստալին): Բաղհարզվիտվություն Համկոմկուսի 16-րդ համագումարին):

16-րդ համագումարը կենտրոնական ուշադրությունը հատկացրեց գյուղի սոցիալիստական վերակառուցման հար-

ցներին, մատնանշելով, թե «խորհրդային տնտեսություններ ստեղծելու և մանր գյուղացիական տնտեսություններին խոշոր կոլեկտիվ տնտեսություններում միավորելու խնդիրը գյուղատնտեսության պրոբլեմի, առհասարակ և հատկապես հացահատիկային պրոբլեմի լուծման միակ ճանապարհն է» (Ստալին) և առաջարկեց «աբմատապես վերանայել գյուղատնտեսության զարգացման հնգամյա պլանը՝ կոլեկտիվացման վերցրած թափերի համեմատ»: Համագումարն ընդգծեց համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակուլթյունը վորպես դասակարգ լիկվիդացիայի յենթարկելու լոգունգի խոշորագույն նշանակությունը, լոգունգ, վոր «նշանակում է բանվոր դասակարգի թրոհը դեպի յերկրում ունեցող իմպերիալիստական շահագործման վերջին հենարանը»: Համագումարն առաջարկեց «գյուղի ամբողջ գործնական աշխատանքում կիրառել կոլխոզնիկի վրա հենվելու լոգունգը» վորպես գլխավոր լոգունգ, ներկա ժամանակաշրջանի համար, միաժամանակ պայքարել և անհատական միջակա-չքավորական տնտեսության թերազնահատման դեմ, հիշելով, վոր այստրվա անհատ տնտեսատերը— դա վաղվան կոլխոզնիկն է:

Համագումարը նշելով բանվոր դասակարգի և նրա զեկավարությամբ բոլոր աշխատավորներին դասակարգային աչալրջությունը և հեղափոխական ակտիվությունը մոբիլիզացիայի յենթարկելու հատուկ կարևորությունը, նշեց մի շարք միջոցառումներ խորհուրդների, արհեստակցական միությունների աշխատանքների վերակառուցման ուղղությամբ, սոցիալիստական մրցակցության և հարվածայնության վերաբերյալ, մասսաներին բյուրոկրատիզմի դեմ պայքարի վերհանելու մասին, ընդգծելով արդյունաբերության, խորհրդային և կոլեկտիվ տնտեսություններին

համար նոր կադրեր պատրաստելու խնդրի հատուկ կարե-
վորութիւնը:

Հաշվի առնելով սոցիալիզմի յերկրի և կապիտալիստա-
կան պետութիւններէ միջև աճող հակասութիւնները, հա-
մագումարն իր ամբողջ վճռականութեամբ ընդգծեց, վոր
անհրաժեշտ է «կենտրոնացնել կուսակցութեան ուշադրու-
թիւնը և ե՛լ ավելի խոշոր չափով մտքի լիզացիայի յեն-
թարկել բանվոր դասակարգի և գյուղացիութեան չքավո-
րական-միջակային մասսաների ուժերը ԽՍՀՄ պաշտպանու-
նակութեան ամբապնդման համար, Կարմիր բանակի, ծո-
վային և ութային նավատորմի զորութեան և մարտ-
ունակութեան բարձրացման համար» (համագումարի բա-
նաձևը Կենտկոմի հաշվետվութեան առթիվ):

6. ՄԵՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴժՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բոյլընիկյան հարձակման պլանը պահանջում է ակտի-
վորեն հաղթահարել այն դժվարութիւնները, վոր կանգ-
նած են սոցիալիստական շինարարութեան ճանապարհին:

Դժվարութիւնները կոծկել չի կարելի: Դժվարութիւն-
ները յեղել են, կան և կլինեն: Սոցիալիզմի շինարարու-
թիւնը, դա — դաժան, համառ պայքար է դժվարութիւն-
ները հաղթահարելու համար: Սակայն հարկավոր է պատ-
կերացնել մեզ, թե ինչու մեք և մեր դժվարութիւնները
եյութիւնը և ինչպես պետք է նրանց հաղթահարենք:

Մեր դժվարութիւնները, զրնաք — վերակառուցման շրջա-
նի դժվարութիւններ են, վորոնք արմատապես տարբերվում
են այն դժվարութիւններից, վոր մենք ունեցել ենք
մինչև 1925—26 թիվը՝ վերականգնման շրջանում: Մի
բան է, յերբ զործի յես գցում չբանող, բայց արդեն կա-
ռուցված Փարբիկա, այլ բան է, յերբ պետք է կառու-
ցես նոր հսկա-գործարան, նոր ելեքտրոկայան և այլն:

Մի բան է՝ գյուղին տալ կտավ, լուցկի և նման ապրանք-
ներ, ուրիշ բան է գյուղին մատակարարել տրակտոր, մե-
քենա, սլարարտանյութեր, արմատապես վերակառուցելով
գյուղատնտեսութեան տեխնիկա: Վերջինս պահանջում է
շատ մեծ միջոցներ, կապիտալ ներդրումներ և տեխնիքա-
կան կադրեր:

Իրա հետ միասին անհրաժեշտ է նշել, վոր վերակեր-
տելով մեր տնտեսութիւնը, մենք վերակառուցում ենք
վոչ միայն տեխնիկան, այլ և սոցիալ-տնտեսական փոխա-
րաբերութիւնները, գյուղը միանձնյա տնտեսարարու-
թիւնից փոխանցելով կոլեկտիվ տնտեսարարութեան:
Մենտրաժեշտ է նորից սկսել վերակառուցել գյուղի հին
սոցիալ-տնտեսական փոխարաբերութիւնները, նորից
սոցիալ-տնտեսական փոխարաբերութիւնները, նորից
սկսել վերակերտել գյուղացիական միլիոնավոր տնտեսու-
թիւնները: Սոցիալիստական շինարարութեան ասպարեզում
տարվող մեր աշխատանքը, յերկրում կապիտալիզմի մնա-
ցորդների վերացման ուղղութեամբ տարվող մեր աշխա-
տանքը առաջ է բերում դասակարգային թշնամու և նրա
գործակալներ — կուլակութեան, բուրժուական ինտելիգեն-
ցիայի վերնախավի, մեր ապարատի բյուրոկրատական
տարրերի ուժեղ դիմադրութիւնը: Այդ ևս իր հերթին
խիստ դժվարացնում է մեր ամբողջ աշխատանքը:

Վերջապես, վոր հարկավոր է հատկապես ընդգծել,
մենք սոցիալիզմ ենք կառուցում կապիտալիստական
շրջափակման մեջ: Մեզ շրջապատում են թշնամի ուժեր,
վորոնք շահագրգռված են նրանում, վորպեսզի խեղդեն
Միութիւնը: Նրանք պաշտպանում և աջակ-
ցում են յերկրի ներսի մեր դասակարգային թշնամուն,
շրջապատում են բլոկադայով և պատրաստում են ռազ-
մական ինտերվենցիա (գինված միջամտութիւն): Այստե-
ղից էլ բղխում են մի շարք նոր դժվարութիւններ:

Այդ ամենն ասում ե այն մասին, վոր մեր դժվարու-
թյունները—հատուկ կարգի դժվարություններ են: Դրանք
վոչ թե կանգառման, անկման դժվարություններ են, այլ
վերելքի, աճման և առաջխաղացման դժվարություններ:
Դրանով մեր դժվարությունները արմատապես տարբեր-
վում են այն դժվարություններից, վոր ապրում են կա-
պիտալիստական յերկրները և վորոնք հանդիսանում են
կանգառման և անկման դժվարություններ: Այսպես, մեր
յերկիրը ապրանքների պահասություն ե զգում: Դրա
պատճառը հանդիսանում ե այն փաստը, վոր սպառման
աճումը, մասսաների գնողական ընդունակության աճումը
հասնում ե արտադրության աճման և առաջ մղում նրան:
Կապիտալիստական յերկրներում ապրանքների գերա-
ուսուցիչութունը թվացող առատությունն ե: Այնտեղ այդ
յերևույթը տեղի յե ունենում նրա համար, վորովհետև
ինքը կապիտալիստական արտադրության բնույթն բնակ-
չության լայն մասսաներին աղքատացման ե յենթարկում,
նվազեցնում ե մասսաների գնողական ընդունակությունը
և դրանով իսկ ստեղծում ճգնաժամներ:

Այդ հանգամանքի ապացուցման համար բավական ե
մեջ բերել ժողովրդական յեկամտի բաշխման տվյալները
մեզ մոտ և կապիտալիստական յերկրներում: 1929—30
թվին ժողովրդական յեկամտի ընդհանուր գումարից ուրիշի
աշխատանքը չշահագործող բանվորների և գյուղացիների
բաժինը կազմել ե մեզ մոտ 77,1%⁰, շահագործող դասա-
կարգերի (կուլակների և քաղաքային կապիտալիստների)
բաժինը—1,8%: Կապիտալիստական յերկրներում շահա-
գործող դասակարգի բաժինը ժողովրդական յեկամտում
կազմում ե 50%: Անդրիայում սեփականատերերի 2%-ից
պակաս տիրում են ամբողջ ազգային հարստության
64%-ին: Դրա համար ել «կապիտալիստների մոտ միան-

գամայն նորմալ ե համարվում ճգնաժամների ժամանակ
վոչնցացնել ապրանքների «գերաուսուցիչութունը» և վառել
գյուղատնտեսական մթերքների «ավելցուկը», պահպանելու
համար բարձր գները և ապահովելու համար բարձր շա-
հույթները, այն ժամանակ, յերբ մեզ մոտ խորհրդային
Միության մեջ այդպիսի հանցագործությունների հեղի-
նակներին կուղարկելին գժանոց» (Ստալին):

Մեր դժվարությունների բնույթից բխում ե նրանց
լիկվիդացիայի յենթարկելու միջոցը: Այդ միջոցն ե—հաղ-
թահարել մեր դասակարգային թշնամիների դիմադրու-
թյունը,—թշնամիներ, վորոնք փորձում են ոգտագործել
մեր դժվարությունները բանվոր դասակարգի դեմ հակա-
հարձակում կազմակերպելու համար,—հաղթահարել «նեղ»
տեղերը, այլ վոչ թե հավասարություն վերցնել նրանց
նկատմամբ, անշեղ կիրառել լենինյան գլխավոր գիծը,
հարձակվել ամբողջ ճակատով, պայքարել նրանց բոլորի
դեմ, ովքեր խանգարում են հարձակումը և նահանջում
դժվարությունների առաջ:

7. ԻՆՉՈՒՄՆ Ե ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ
ՇՐՋԱՆԻ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Սակայն, ամբողջ ճակատով հարձակվելու քաղաքակա-
նությունը և կուլակին վորպես դասակարգ լիկվիդացիայի
յենթարկելու քաղաքականությունը չի նշանակում, արդ-
յոք, նեպի վերացում: Հասկանալի յե, վոր վնչ: Նեպի
վերացման խոսակցությունները ձեռնտու յեն կամ կու-
լակային գործակալներին, վորոնք ուզում են սարսա-
փեցնել մասսաներին և վորի համար կուսակցությանը
վերադրում են նեպի վերացում, կամ «ձախ» խոտորումնա-
վորներին, վորոնք նեպի վերացման մասին խոսակցություն-
ներով ուզում են արդարացնել իրենց սեփական սխալները:

Այդ խոսակցութիւնները հիմնվում են այն բանի անգիտացման վրա, վոր նոր տնտեսական քաղաքականութիւնը, ըստ Լենինի մտքի, ներառնում է իր մեջ վոչ միայն նահանջ, վոչ միայն մասնավոր առևտրի աշխուժացման հանդուրժում, այլև ուժերի համապատասխան վերախմբավորումից հետո սոցիալիզմի հարձակում կապիտալիստական տարրերի դեմ և նրանց դուրս վանում:

Նեպի կիրարկումից քիչ անց Լենինն իր ճառերից մեկում մատնանշեց, վոր «մենք այժմ նահանջում ենք յետ, սակայն մենք այդ անում ենք, վորպեսզի նախ նահանջենք, իսկ հետո թափ առնենք և ավելի ուժգնորեն շարժվենք առաջ», իսկ կուսակցութեան XI համագումարին 1922թ. Լենինը հայտարարեց, վոր «նահանջը վերջացել է»:

«Ամբողջ ճակատով հարձակման անցնելով, մենք դեռ չենք վերացնում նեպը, քանի վոր մասնավոր առևտուրը և կապիտալիստական տարրերը դեռ մնում են, ապրանքաշրջանառութիւնն ու դրամային տնտեսութիւնը դեռ մնում են, բայց մենք հաստատ վերացնում ենք նեպի սկզբնական շրջանը, ծավալելով նրան հաջորդող շրջանը— նեպի ներկա շրջանը, վորը է նեպի վերջին շրջանը» (Ստալին):

Նեպի այդ վերջին շրջանի ելութիւնը կայանում է նրանում, վոր նա ապահովում է «համայնացված սեկտորի աճող գերակշիռը չհամայնացված սեկտորի նկատմամբ, սոցիալիզմի հողթանակը կապիտալիզմի նկատմամբ» (Ստալին), կուլակութեան վորպես դասակարգի լիկվիդացիան՝ համատարած կուլեկտիվացման հիման վրա, վորպես «բանվոր դասակարգի դրոհ դեպի կապիտալիստական շահագործման վերջին հենարանը յերկրում» (Կենտկոմի հաշվետվութեան աթիվ ընդունված բանաձևը), կապիտալիզմի արմատների վոչնչացումը յերկրում:

Այդ մոմենտը—ամբողջ ճակատով հարձակման անցնելու մոմենտը—նախատեսել է Լենինը: Իր վերջին ճառերից մեկում նա կոչ արեց «մերձեակ գյուղացիական մասսային, շարքային աշխատավորական գյուղացիութեանը և սկսել առաջ շարժվել անչափ, անսահման դանդաղ, քան մենք յերազում եյինք, բայց այնպես, վոր իրոք պիտի առաջ շարժվի մեզ հետ միասին ամբողջ մասսան»...

Այդ դեպքում «իւր ժամանակին վրա կհասնի այդ շարժման այնպիսի արագացում, վորի մասին մենք այժմ յերազել անգամ չենք կարող»: (Լենին, յերկերի ժող. հատոր 18, գիրք 2-րդ, էջ 29—30):

Լենինյան քաղաքականութեան ճիշտ կիրառման հետեւանքով կուսակցութիւնը ձեռք է բերել շարժման արագացման այդ մոմենտը, վորի մասին ասել է Լենինը: Կուսակցութիւնը ճիշտ է ընտրել հարձակման մոմենտը, կուսակցութիւնը տեսակետները,—վորոնք դեն շարտելով տրոցկիստների տեսակետները,—վորոնք առաջարկում եյին հարձակման անցնել դեռ ևս 1926—27 թ. թ. յերբ մենք վոչ մի հնարավորութիւն չունեյինք կուլակային արտադրութիւնը փոխարինելու կոլխոզների և սովխոզների արտադրութեամբ,—և ջախջախելով աջերին, վորոնք առաջարկում եյին հրաժարվել հարձակումից և կուլակութեան զարգացման համար ձանապարհ հարթել:

Իսկ ի՞նչպիսի շրջան ենք մենք հիմա ապրում: Սովորաբար մեր շրջանը մենք անվանում ենք կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու շրջան, փոխանցման շրջան: Բայց սոցիալիզմին անցնելու շրջան, փոխանցման շրջանը 1918 թվի փոխանցման պետք է նկատել տարբերութիւնը 1918 թվի փոխանցման շրջանի՝ յերբ մեր արդյունաբերութիւնը քայքայված էր, չկային կուլեկտիվ և խորհրդային տնտեսութիւններ, աճում էր նոր բուրժուազիան քաղաքում և կուլակութիւնը գյուղում,—և 1930 թվի փոխանցման շրջանի տարբերութիւնը, իսկ 1930 թվին մեր ձեռքին գտնվում է հզոր սոցիալիստա-

կան արդյունաբերութիւն, ԽՍՀՄ բոլոր ցանքսերի 40%-ից
ավելին կուլեկտիվ և խորհրդային տնտեսութեան ցանք-
սերն են, յերբ միանում են «նոր» բուրժուազիան և
կուլակութիւնը: «Յե՛վ այնտեղ փոխանցման շրջան: Յե՛վ
այստեղ փոխանցման շրջան: Յե՛վ այնուամենայնիվ նրանք
արմատապես տարբերվում են մեկը մյուսից, վորպես
յերկինքը յերկրից: Յե՛վ այնուամենայնիվ վոչ վոք չի կա-
րող բացասել, վոր մենք կանգնած ենք վերջին լուրջ
կապիտալիստական դասակարգի, կուլակ դասակարգի լիկ-
վիրացիայի շեմքին: Պարզ ե, վոր մենք արդեն դուրս ենք
յեկել փոխանցման շրջանից, վերցրած իր հին իմաստով,
թեևակոսել ենք ամբողջ ճակատով ուղղակի և ծավալուն
սոցիալիստական շինարարութեան շրջանը: Պարզ ե, վոր
մենք արդեն մտել ենք սոցիալիզմի շրջանը, քանի վոր
սոցիալիստական սեկտորն այժմ պահում ե իր ձեռքում
ամբողջ ժողովրդական տնտեսութեան բոլոր տնտեսական
լծակները, թեպետ և դեռ հեռու յե սոցիալիստական
հասարակակարգի կառուցումը և դասակարգային տարբե-
րութիւնները վոչնչացումը» (Ստալին):

8. ԿՈՒՍՍԿՅՈՒԹՅԱՆ ՂԵԿՍՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ԲԱՅԱԶՍԱՎԱԾ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Սոցիալիստական շինարարութեան գործում կուսակցու-
թիւնը չեր կարող ձեռք բերել հսկայական հաջողութիւն-
ներ, յեթե նա բավականանար միայն գլխավոր գիծ մշա-
կելով, չմտահոգվելով այն մասին, թե ինչպես ե այդ գիծը
կյանքում կիրառվում:

Ճիշտ ղեկավարութեան համար, բացի մնացած բոլորից,
կուսակցութեանն անհրաժեշտ ե, վորպեսզի կուսակցու-
թեան գիծը լինի ճիշտ, վորպեսզի մասսաները հասկանան
կուսակցութեան գծի ճշտութիւնը և պաշտպանեն այն

ակտիվ կերպով, վորպեսզի կուսակցութիւնը չբավակա-
նանա գլխավոր գծի մշակումով, այլ որեցոր ղեկավարի
նրա կենսագործումը, վորպեսզի կուսակցութիւնը վճռա-
կան պայքար մղի գլխավոր գծից կատարվող թեքումների
և նրանց նկատմամբ հայտաբերվող հաշտվողականութեան
դեմ, վորպեսզի թեքումների դեմ մղած պայքարում կու-
սակցութիւնը կռի իր շարքերի միասնականութիւնը և
յերկաթե դիսցիպլինան» (Ստալին):

Իրա համար ել բացառապէս սոցիալիստական հար-
ձակման համար անհրաժեշտ կուսակցութեան ճիշտ ղեկա-
վարութիւնը յենթադրել ե և յենթադրում ե բանվոր
դասակարգի և գյուղացիութեան ամենալայն մասսաների
ներգրավումը սոցիալիստական շինարարութեան մեջ, նրանց
միաձուլումը և գորահավաքման յենթարկումը կուսակցու-
թեան գլխավոր գծի շուրջը, նրանց ստեղծագործական
ակտիվութեան ամեն կերպ ծավալումը՝ կուսակցութեան
գլխավոր գծից բղիտող գործնական խնդիրների և լոզունգ-
ների կատարման գործում:

Կուսակցութիւնը յերկրի ինդուստրացմանն արագ
թափեր ե ապահովել նախ և առաջ այն պատճառով, վոր
կարողացել ե գլխավորել բանվոր դասակարգի բուն
աշխատանքային վերելքը և այդ վերելքն ուղղել սոցիա-
լիստական մրցակցութեան և հարվածայնութեան հունը:

«Մրցակցութեան մեջ ամենից ուշադրավը կայանում ե
նրանում, վոր նա արմատական հեղաշրջում ե առաջաց-
նում աշխատանքի նկատմամբ ունեցած մարդկանց տե-
սակետների մեջ, քանի վոր նա աշխատանքը ծանր ու
անսլատիվ բեռից, ինչպիսին նա համարվում եր առաջ,
դարձնում ե պատվի գործ, փառքի գործ, հերոսութեան
ու պարծանքի գործ» (Ստալին): Հատկապէս սոցիալիս-
տական մրցակցութեան ընթացքում բանվորական մասսա-

ների խորքից ծնվեց հնգամյակը չորս տարում կատարելու լողունգը:

Սոցիալիստական մրցակցության և հարվածայնության զարգացումը—արդֆինպլանները կատարման և գերակատարման համար մղած բանվորական մասսաների պայքարի այդ ամենացայտուն արտահայտությունը — կախված է յեղել և կախված է սոցիալիստական արդյունաբերությունների վերելքի խնդիրների համեմատ պրոլետարական բոլոր կազմակերպությունների, պրոլետարական դիկտատուրայի բոլոր որդանների (արհմիություններ, խորհուրդներ, կոոպերացիա, կոմյերիտմիություն և կուսակցություն) աշխատանքների արմատական վերակառուցման աստիճանից, յերեսով դեպի արդյունաբերությունը կատարած նրանց շրջադարձի հաջողությունից:

Արհմիություններին նախկին սպորտյունիստական ղեկավարությունը Տոմսկու գլխավորությունը կուսակցությանը ուղղակի դիմադրություն է ցույց տվել արհմիությունների աշխատանքի վողջ սխտեմի վերակառուցման գործում: Բնական է, վոր չփոխելով այդ ղեկավարությունը, վճռական հարված չհասցնելով պրոֆապարատի ներսի տրեդյունիոնիստական տենդենցներին, կուսակցությունը չեր կարող արհմիությունները դարձնել պրոլետարական դիկտատուրայի մարտական մարմիններ, սոցիալիստական տնտեսության կազմակերպման համար պայքարող բանվոր դասակարգի ամենալայն մասսաների ղեկը: Կուսակցության՝ արհմիությունների ղեկավարության գործում կատարած լենինյան-բայրելիկյան ամրապնդման աշխատանքի արդյունքները չուշացան հայտաբերվել: Արհմիությունների վերակառուցումը, նրանց շրջադարձը դեպի արտադրությունն արդեն սկսվել է: Սոցիալիստ. մրցակցության և հարվածայնության ղեկավարման մեջ արհմիությունների գերը

բարձրացել է անհամեմատ ավելի բարձր մակարդակի վրա, քան այդ կար առաջ: Արհմիությունները սկսել են ավելի շատ ուշադրություն հատկացնել կադրերի պատրաստման և մասսաների կուլտուրական մակարդակի բարձրացման գործին: Լավագույն բանվոր-հարվածայինները հոսանքը դեպի արհմիությունների ապարատը ապահովում է դեպի արտադրական խնդիրները կատարած արհմիությունների շրջադարձի հետագա ամրապնդումը և սոցիալիստական բացազատված հարձակման պայմաններում բանվորական մասսաների համար ունեցած արհմիությունների դերի՝ վորպես կոմունիզմի դպրոցի՝ բարձրացումը:

Կուսակցությունը նշանակալից հաջողություններ է ձեռք բերել նաև կոմյերիտական և կուսակցական բլիշների աշխատանքը յերեսով դեպի արդյունաբերությունը դարձնելու բնագավառում: Կոմյերիտական և կուսակցական կազմակերպությունների ստորին ցանցը, կոմյերիտական կազմակերպության ամբողջ մասսան գործով տականների և կոմունիստների մասսան գործով ցույց տվին, վոր նրանք բանվոր դասակարգի ավանցույց տվին, վոր նրանք բանվոր դասակարգի ապարատի հաջողությունները կուսակցության սոցիալիստական վերակառուցման ղեկավարության բնագավառում կուսակցությունը ման ղեկավարության մոբիլիզացիայի յենթարկել քաղաքային կարողացել է մոբիլիզացիայի յենթարկել կուլեկտիվ և պրոլետարիատի ամենալայն մասսաներին կուլեկտիվ և խորհրդային տնտեսություններ կազմակերպելու գործում գյուղին ոգնելու համար: Գյուղի նկատմամբ ունեցած վառ արտահայտություն գտավ հացամթերման և սերմանվառ արտահայտության գտավ հացամթերման և սերմանվառ կամպանիաների անցկացման ցույց տված պրոլետարական կադրերի մասնակցության մեջ, «քսանևհինգհարյան կադրերի մասնակցության մեջ, «քսանևհինգհարյան կադրերի» կոլխոզներում մշտական աշխատանքի ու

դարկելու մեջ, շեֆական ընկերությունները ուժեղացման մեջ: Քաղաքային բանվորները ոգնեցին գյուղական պրոլետարներին և չքավորությանը կուլակուլթյան դեմ մղած նրանց պայքարում, այդ պայքարի ընթացքում ամրապնդեցին բանվոր դասակարգի ու չքավորության դաշինքը միջակ գյուղացիության հետ, աջակցեցին գյուղական բոլոր կազմակերպություններին վերակառուցվելու յերեսով դեպի գյուղատնտեսության սոցիալիստական վերակերտումը, յերեսով դեպի կոլլեկտիվ և խորհրդային տնտեսությունները: Այն ոգնությունը, վորը կուսակցության ղեկավարությամբ պրոլետարական քաղաքը ցույց է տվել գյուղին, կարևորագույն դեր է կատարել գյուղատնտեսության կոլլեկտիվացման մեջ, գյուղացիական հիմնական մասսաների՝ դեպի սոցիալիզմը կատարած՝ արմատական շրջադարձի մեջ:

Սակայն կուսակցության՝ գյուղում տարած ամբողջ աշխատանքի թույլ տեղն է հանդիսանում հենց գյուղական կազմակերպությունների գրությունը: Գյուղական կուսակցական կազմակերպությունները դեռ շատ թույլ են թե քանակապես և թե վորակապես: Գյուղական «բլիժը վորպես արտադրական, ղեկավար, կազմակերպիչ ուժ այսօրվա օրը դեռ աննշան դեր է խաղում» (Կազանովիչ): Մինչդեռ միանգամայն ակնհայտ է, վոր ինչքան էլ լայն չափերով զարգանա պրոլետարական քաղաքի ոգնությունը գյուղին, սոցիալիստական եկոնոմիկայի հենարանի կառուցումը գյուղում կարող է ավարտվել միայն այն դեպքում, յեթե ինքը գյուղը իր միջավայրից, բատրակների և կոլխոզնիկների միջից չի առաջադրի խորհրդային և կոլլեկտիվ տնտեսությունների համար, սոցիալիզմի համար, պայքարող հարյուր հազարավոր նոր մարտիկներ: Կոլխոզային շարժման անցած փուլն արդեն կոլխոզնիկներից

առաջ է քաշել բազմաթիվ գերադասաց ակտիվիստ-կազմակերպիչներ: Բանվոր դասակարգի առաջավոր կազմերի խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի գյուղական այդ ակտիվին զինեն անհրաժեշտ գիտելիքներով և վորայդ համար կազրեր պատրաստելու գործում մեծ դեր է կատարում նաև կարմիր բանակը, վորը ամեն տարի յեւրիս տալիս է սոցիալիզմի շինարարության տասնյակ հազարավոր ակտիվ մարտիկներ:

Գյուղում կուսակցության գիրքերը ամրապնդելու տեսակետից քաղաքական բացառիկ կարևոր նշանակություն ունի համագումարի վորոշումը՝ գավառների վերացման և ունի համագումարի մասին: Այդ վորոշման կենսաշրջանների ուժեղացման մասին: Այդ վորոշման կենսագործումը կուսակցական-խորհրդային ապարատը վճարում է կանոնները կամոտեցնի գյուղացիության, խորհրդային և կոլլեկտիվ տնտեսություններին, կընդլայնի կուսակցության կազրային կազմը գյուղում, առաջ կմղի սոցիալիզմի շինարարությունը գյուղում:

Վորպես մասսաների քաղաքային ակտիվության մոբիլիզացիայի յենթարկելու և կազմակերպելու հիմնական միջոց կուսակցությունն առաջադրել է լայն պրոլետարական ինքնաքննադատության լոզունգը: Ինքնաքննադատության խնդիրն է «անխնա յերևան հանել մեր աշխատանքի բացերը մեր շինարարության ամրապնդման համար: Խորհրդային իշխանության ամրապնդման համար: Հայտնի յե, վոր կուսակցության կոչը ամենակենդանի արձագանքը գտավ բանվոր դասակարգի և գյուղացիության մասսաներում» (Ս տ ա լ ի ն):

Պրոլետարական ինքնաքննադատությունը հանդիսացել է ամենախոշոր զենքը պետապարատի բյուրոկրատիզմի, դասակարգայնորեն խորթ, վրասաբարական և բյուրոկրատացման յենթարկված տարրերի դեմ բանվոր դասակարգի

շարքերի նշանակալից ընդլայնում և դրա հետ միասին նրա սոցիալական կազմի բարելավում: Յեթե 14 և 15-րդ համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում կուսակցությունն աճել է 20,80%-ով, ապա 15-րդ և 16-րդ համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում նա աճել է 42,20%-ով (սովյաները վերաբերում են առ 1-ն ապրիլի 1930 թ.), հաշվելով իր շարքերում 1.852,090 մարդ (նրանցից 1.210.527 կուս. անդամներ): Կուսակցության բանվորական կորիզը 15-րդ համագումարին կազմել է 57,80% (դրանց թվում 40,80% արտադրական բանվորներ), իսկ այժմ նա կազմում է 62,20% (դրանց թվում 48,60% արտադրական բանվորներ): Այդպիսով կենտկոմի 1928 թվի նոյեմբերյան պլենումի վորոշումը այն մասին, վորպեսզի «1930 թվի վերջից վոչ ուշ կուսակցության մեջ լինեն նրա կազմի կեսից վոչ պակասը արտադրական բանվորներ»—հիմնականում իրագործված է:

Կուսակցության քաղաքական աճման հետ միասին տեղի յե ունեցել կուսակցական լայն մասսաների գաղափարական-տեսական մակարդակի անընդհատ աճում: Ընթացիկ ուսումնական տարում կուսակցության լուսավորական ցանցի կողմից ընդգրկվել են 1.100.000 ունկնդիրներ, վորոնք 3 տարվա ընթացքում տալիս են 420% աճում:

Կուսակցության մարտական համախմբվածության բարձրացման գործում, կուսակցության մասսաների ակտիվության բարձրացման գործում, կուսակցության շարքերը քայքայված և բյուրոկրատացած տարրերի մաքրման գործում, կուսակցական ապարատի աշխատանքի ձևերի մեթոդների վերակառուցման գործում ամենախոշոր ներդրումն է կատարել ինքնաքննադատության հզոր վերելքը: Ինքնաքննադատության զենքով բոյլընկիյան կուսակցությունը առանձին կազմակերպությունների գործնական

աշխատանքում յերևան է բերել մի շարք պակասություններ ու պալարներ: «Յուրաքանչյուր այդպիսի խոց հայտարեբելու դեպքում կենտկոմը զարտիարակել է մասսաներին—կուսակցական և անկուսակցական,—դաստիարակել և կազրերին, բյուրոկրատիզմի և վերասերման տարրերի դեմ անխնա պայքարելով, մասսաներին կոչ անելով ինքնաքննադատությանը վարից ծավալելու ոգտին սխտեմատիկ և անշեղ պայքար մղել (Կազանովիչ):

Այդ հիման վրա ընթացել է կուսակցական ապարատի ղեկավար կազրերի անընդհատ բարելավման և կուսակցական մասսաների ակտիվության աճման պրոցեսը:

Միևնույն ժամանակ կուսակցությունը անխնա հակահարված է տվել բոլոր այն փորձերին, վորոնք կամեցել են ոգտագործել ինքնաքննադատությանը կուսակցությանը և խորհրդային իշխանությանը թշնամի հակահեղափոխական տրոցկիստները և աջ սպորտունիստական հայացքների սլրոպազանդի համար, բոլոր այն փորձերին, վորոնք կամեցել են բոյլընկիյան պրոլետարական ինկուտուրայի դեմ թյունը փոխարինել պրոլետարական դիկտատուրայի դեմ սղղված հակահեղափոխական հարձակումներով:

10. ԿՈՒՍՍ.ԿՅՈՒԹՅԱՆ ԳԻԾԸ ՀԱՂԹԱՆԱԿՈՒՄ Ե

Կուսակցությունը հաստատ և անշեղ վարել է և վարում է սոցիալիզմի շինարարության լենինյան գիծը, պահպանելով իր շարքերի ամբողջությունն ու միասնականությունը, հեռացնելով իր ճանապարհից բոլոր թերահավատներին: Կուսակցության 16-րդ համագումարը գլխովին ջախջախեց աջ թեքումը, աջ սպորտիցիայի հայացքներն անհամատեղելի համարելով կուսակցության պատկանելիության հետ: 16-րդ համագումարը ցույց տվեց կուսակցության

միասնականությունը, կուսակցության միաձույլ համախմբ

վածութիւնը լենինյան գլխավոր գծի շուրջը, նրա բոլոր
շեխիւյան դեկավարութեան և կուսակցութեան առաջնորդ՝
Լենինի հավատարիմ աշակերտ, Լենինի գործը շարունակող
ընկ. Ստալինի շուրջը: Այդ հաստատ գրավական և
այն բանի, վոր 16-րդ կուսհամագումարի լոզունգը—նեպա-
կան Ռուսաստանը դարձնել սոցիալիստական Ռուսաստան,
համաշխարհային պրոլետարական հեղափոխութեան պող-
պատե հենարան—պատմական ամենակարճ ժամանակամի-
ջոցում կկիրառուի կյանքում ԽՍՀՄ-յան մեջ սոցիալիստա-
կան հասարակարգ կառուցողները բաղմամբ իրեն մասսա-
ները կողմից, Լենինի կուսակցութեան դեկավարութեամբ:

1921 թվին Համկոմկուսի կոնֆերենցիայում Լենինը
արտասանած իր ճառում ասել է—«այժմ մեր գլխավոր ներ-
գործումը միջազգային հեղափոխութեան վրա մենք կա-
տարում յենք մեր տնտեսական քաղաքականութեամբ: Բո-
լորը նայում են Խորհրդային Ռուսաստանի հանրապետու-
թեանը, բոլոր աշխատավորները աշխարհիս բոլոր յերկրնե-
րում, առանց վորեւե բացառութեան, առանց վորեւե Հա-
փազանցութեան: Դրան մենք հասել ենք: Լուել, թագցնել
իմպերիալիստները վոչինչ չեն կարող, նրանք ամենից շատ
դրա համար ել վորսում են մեր տնտեսական սխալները և
մեր թուլութիւնը: Այդ ասպարեզն և տեղափոխված պայ-
քարը համաշխարհային մասշտաբով: Կլուծենք մենք այդ
խնդիրը—և այն ժամանակ մենք գործը տարել ենք հա-
մաշխարհային մասշտաբով հաստատապես և վերջնակա-
նորեն» (Լենին, յերկերի ժողովածու, հատ. XVIII, մ. I,
էջ 282):

Լենինի կողմից դրված այդ խնդիրը մենք իրագոր-
ծում ենք հաստատ և անշեղորեն: Լենինի դրոշի տակ
սոցիալիզմը կհաղթանակի խորհրդային միութեան մեջ և
ամբողջ աշխարհում:

ՋՐՈՒՅՑ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՄԿՈՄԿՈՒՍԸ — ԼԵՆԻՆՅԱՆ ԳԾԻ ՈԳՏԻՆ ՅԵՐԿՈՒ ՃԱԿԱՏԻ ՎՐԱ ՄՂԱԾ ՊԱՅԳԱՐՈՒՄ

Կուսակցութեան թեզուսները դեմ մղած պայքարի ելութիւնը: Կուսակ-
ցութեան պայքարը թեզուսները դեմ մինչ չնկատմբեր, Պայքարը թեզուսները
դեմ քաղաքացիական պատերազմի տարիներին և նեպի առաջին տարիներին:
Թեզուսն դասակարգային արմատները: Տրոցկիզմը և «ձախ» խռտորուսները: Աջ
թեզուսը վորպես ներկա շրջանի գլխավոր վտանգ և նրա ելութիւնը: 16-րդ
կուսհամագումարը թեզուսները դեմ մղող պայքարը մասին: Կուսակցութեան
պայքարը ազգային հարցում տեղե ունեցող թեզուսները դեմ:

1. ԻՆՉՈՒ ԹԵՔՐՈՒՄՆԵՐԻ ԳԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅԳԱՐԸ—ԿՈՒՍԱԿՑՈՒ-
ԹՅԱՆ ԱՄՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆ Ե

Իր պատմութեան ամբողջ ընթացքում Համկոմկուսը
իր պատմութեան ամբողջ ընթացքում զասա-
վարել է և վարում է անհաշտ պայքար ընդդեմ դասա-
կարգային թշնամիները բոլոր և ամեն տեսակի փորձերի,
վորոնք ուղղում են բանվոր դասակարգի վզին փաթաթել
իրենց հայացքները, շեղել բանվոր դասակարգին կամ
նրա առանձին խմբերին լենինյան ճիշտ գծից, սոցիա-
լիզմի համար մղվող պայքարից: Այդ հայացքների հաղոր-
դիչները բանվոր դասակարգի մեջ յեղել են զանազան
համաձայնողական կուսակցութիւններ և հոսանքներ—մեն-
շեխիկները, ետերները, տրոցկիստները, ինչպես նաև շարժ-
ման այս կամ այն փուլերում բոլորշեխիկների կուսակցութեան
ներսում ծնված տարբեր տեսակի սուղղիցիոն խմբակներ:

Այժմ խորհրդային իշխանութեան մեջ Համկոմկուսից
բացի չկան վորեւե այլ կուսակցութիւններ: Այդ սակայն

չի նշանակում, թե ինքը Համկոմկուսը իր սեփական միջավայրում ամբողջապես ապահովագրված է թեքումներից: ԽՍՀՄ դասակարգային թշնամիները դեռ մնում են, մենք սլայքար ենք մղում մեր յերկրի ներսում յեղած նրանց գլխավոր շոկատի—կուլակուլթյան լիկվիդացիայի համար: Կուլակը դեռևս ազդեցութուն ունի միջակ գյուղացիության առանձին խավերի, նույնիսկ չքավորների և բառբակների առանձին խմբերի վրա: Կոլխոզ մտած և խորհրդային իշխանության ամուր հենարան դարձած միջակը տակավին չի վերջացրել իր մանրսեփականատիրական հայացքները, կոլխոզում նրան վերադաստիարակման յենթարկելը—մի շարք տարիների գործ է: Վերջապես քաղաքներում դեռ գոյութուն ունեն կապիտալիստական տարրեր, նախկին իշխող դասակարգերի և քաղաքային մեղչանականության մնացորդները: Բուրժուական և մանր-բուրժուական ազդեցութունները զանազան ճանապարհներով—գյուղից կամ քաղաքային մանր-բուրժուական միջավայրից դուրս յելածների միջոցով—ներծծվում են և բանվոր դասակարգի մեջ ու վարակում նրա առանձին շոկատներին: Հասկանալի յե, վոր այդ ամենը անհետ չի անցնում կուսակցության համար:

Այնպիսի մասսայական կուսակցության մեջ, վորպիսին հանդիսանում է Համկոմկուսը, և վորն իր կազմի մեջ ներառնում է վոչ միայն բանվորներին, այլև գյուղացիներին ու ծառայողներին, բնականաբար կա և ավելի պակաս գիտակից, դասակարգային մարտերում ավելի քիչ կոփված ընկերների վորոշ մաս: Առավել ևս, յերբ մեր կուսակցութունը անմարդաբնակ կղզու վրա չի գտնվում, Բանվոր դասակարգի յետամնաց խավերին անցած մանր-բուրժուական տրամադրութունները յերբեմն տատանումներ է առաջ բերում և կուսակցության առան-

ձին անդամների մեջ: Այդ վտանգը հատկապես մեծ է և կուսակցության գյուղական կազմակերպութուններում, վորոնք ասլրում են գյուղացիության շրջապատման մեջ: Ավելին, այնքան, վորքան Համկոմկուսը հիմա մեր յերկրում հանդիսանում է միակ կուսակցութունը, ըստ վորում և կառավարող կուսակցութունը, ապա նրա շարքերն են ձգտում թափանցել և յերբեմն թափանցում են դասակարգային խորթ տարրեր, վորոնք փորձում են քայքայել կուսակցութունը ներսից:

Այդ բոլոր հանգամանքները կուսակցության ներսում առաջ է բերում այս կամ այն թեքումները, վորոնք այդպիսով հանդիսանում են վոչ այլ ինչ, քան սոցիալիստական շինարարության դեմ մղած իրենց պայքարում կուսակցության անդամների առանձին խմբերի վրա հենվելու դասակարգային թշնամիների փորձերի տրտահայտության: Կուսակցության ներսի ոպողիցիոն խմբակները հանդիսակցության ներսում է, —անկախ նրանից, գիտակցում նում են, նշանակում է, —անկախ նրանից, գիտակցում են, արդյոք, նրանք այդ կամ չեն գիտակցում, —դասակարգային թշնամու գործակալութունը կուսակցության մեջ և բանվոր դասակարգի մեջ: Ահա թե ինչու կուսակցության պայքարը կուսակցության գլխավոր լենինյան գծից կատարվող թեքումների դեմ յեղել է, մնում է և կմնա կուսակցության պողպատե լենինյան միասնականության և սոցիալիզմի ոգտին բանվոր դասակարգի վարած պայքարում ունեցած նրա առաջնորդող դերի պահպանման գլխաավոր նախապայմանը:

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՉՊԵՍ Ե ՊԱՅԲԱՐԵՆ ԵՆՎ ԻՆՉՊԵՍ Ե ՊԱՅԲԱՐՈՒՄ ԼԵՆԻՆՅԱՆ ԳԾԻ ՈԳՏԻՆ

Նախկին զրույցներում խոսվեց, թե դեռևս իր սկզբնավորման արևածագին բոյլը կիյան կուսակցութունը պայ-

վիկները և եսերները հետ: Միանգամայն արդարացի կերպով Լենինն այդ խմբակն անվանեց «շտրեյկբրեյտերյան»: Նրա գործողութիւնները դավաճանական բնույթ էյին կրում սոցիալիստական հեղաշրջման նկատմամբ: Կամենևի և Զինովևի հայացքների էյուլթյունը կայանում էր նրանում, վոր նրանք վախեցել էյին պրոլետարական հեղափոխության դժվարութիւններից և չէյին հավատում բանվոր դասակարգի ուժերին:

Հոկտեմբերյան հեղափոխութիւնից հետո Կուսակցութիւնը քանիցս ստիպված էր յետ մղելու Համկոմկուսի ներսի ոպողիցիոն զանազան խմբավորումների գրոհները: Բավական է մատնանշել «ձախ» կոմունիստների յելույթը 1918 թվին Բրեստի պայմանագրի կնքման ժամանակ, Տրոցկու և նրա միախոհների դեմ մղած 1920—1921 թ. թ. դիսկուսիան արհմիութիւնների դերի և խնդիրների հարցի մասին, այդ իսկ շրջանում «դեմոկրատական ցենտրալիզմի», «բանվորական ոպողիցիայի» և «բանվորական ճըշմարտության» («ռարոչայապրավդա») խմբակների հանդես գալը, արոցկիստական ոպողիցիայի 1923 թվի յելույթը տնտեսական և ներկուսակցական հարցերի վերաբերյալ և արոցկիստների ու այսպես կոչված լենինյան ոպողիցիայի միացյալ հետագա յելույթները:

Հատկապես համառորեն, համարյա ամբողջ յետհեղափոխական շրջանի ընթացքում, Կուսակցութիւնը պայքարել է արոցկիզմի դեմ, վորը ժխտում էր մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորութիւնը, չեր հավատում գյուղացիութիւնը սոցիալիզմի շինարարութիւն մեջ ներգրավելու հնարավորութիւնը, փորձում էր վերացնել Լենինի հայացքները Կուսակցութիւն մեջ խմբավորումների և Ֆրակցիանների անթույլատրելիութիւն մասին և ստեղծել իր սեփական արոցկիստական կուսակցութիւնը: Կուսակ-

ության 15-րդ համագումարը արոցկիստական տեսակետներն անհամատեղելի համարեց Համկոմկուսի շարքերում ալու հետ և արտաքսեց արոցկիստներին Կուսակցութիւնը: Վերջապես, 15-րդ համագումարից հետո Կուսակցութիւնը վարել և վարում է անհաշտ պայքար աջ թեքման դեմ, վորը սվյալ փուլում հանդիսանում է գլխավոր վտանգը: Թեքումների և նրանց նկատմամբ հաշտփողականութիւն մղած պայքարում, բոյլշևիզմի իդեյական սկզբունքների մաքրութիւն ոգտին, հեղափոխական-դասակարգային իդեյաի ոգտին մղած պայքարում—Համկոմկուսն աճել է, կոփել և ամրապնդվել վորպես բանվոր դասակարգի միասնական համախմբված Կուսակցութիւն, վորպես խորհրդային Միութիւն բոլոր աշխատավորների քաղաքական աջակցութիւն: Լենինը բացմիցս մատնանշել է, թե բոյլշևիզմն կոփվել և ամրապնդվել է ինչպես աջ ոպորտունիզմ, այնպես էլ «ձախ» մանր-բուրժուական հեղափոխականութիւն դեմ մղած պայքարում—վերջինս այն տարրերն են, վորոնք ձախ Ֆրակցներով ծածկում են աջ քաղաքականութիւնը, հանդիսանալով այդպիսով շուռ սված ոպորտունիստներ: Վճռականապես հաղթահարելով այն բուրժուական տատանումները իր շարքերում, անխնա պայքարելով ոպորտունիզմի դեմ ձախից և աջից, հատելով բուրժուակալի ղեցութիւն տակ ընկած Կուսակցութիւնն առանձին անդամներին և նրանց ամբողջ խումբակներին, կուսակցութիւնը կարողացավ հաղթահարել և կուսակցութիւնը, յետ մղել սպիտակ գվարդիական փոխութիւնը, յետ մղել սպիտակ գվարդիական պայքարը և հաշտութիւն մտնել սոցիալիզմի կառուցմանն անցնել մեր յերկրում:

Համկոմկուսի գաղափարական համախմբվածությունն ու միասնականությունը — պրոլետարական զիկտատուրայի ամբողջյան և հզորության անհրաժեշտ նախապայմանն է։ Վորովհետև յուրաքանչյուր ճեղքվածքը կուսակցության մեջ, վորը ղեկավարում է Խորհրդային պետությանը, յերկաթե անխուսափելիությամբ իր յետևից առաջ կբերվի ճեղքվածք և Խորհրդային էշխանության մարմիններում։

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԾԻՑ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ ԹԵՔՈՒՄՆԵՐԻ ԳԵՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Վորոնք են ամբողջ ճակատով ծավալուն սոցիալիստական հարձակման ժամանակակից շրջանում կուսակցության գլխավոր գծից կատարվող թեքումների դասակարգային արմատները։ Ընկեր Ստալինն այսպես պատասխանեց այդ հարցին կուսակցության 16-րդ համագումարում՝ արած էր գեկուցման մեջ։

«Մեր կուսակցությունն ապրում և առաջանում է մի վուչ անող տարածության մեջ։ Նա ապրում և մտաբանում է կյանքի թանձրում, յենթարկվելով շրջապատող միջավայրի ազդեցությանը։ Իսկ միջավայրի մեզ մոտ, ինչպես հայտնի յե, կազմված է զանազան դասակարգերից և սոցիալական խմբերից։ Մենք ձեռնարկել ենք բացազատված հարձակում կատարելու լիստական տարրերի վրա, մենք բավական առաջ ենք շարժել մեր սոցիալիստական արդյունաբերությունը։ մենք ծավալել ենք Խորհրդային և կոլեկտիվ անտե սությունների շինարարությունը։ Բայց այդպիսի յերևույթները չեն կարող իզուր անցնել շահագործող դասակարգերի համար։ Այդ յերևույթները սովորաբար ուղեկցվում են մեռնող դասակարգերի քայքայմամբ, գյուղում կուլակի քայքայմամբ, քաղաքի մանր բուրժուական խավի գործնեյության ասպարեղ

նեղացմամբ։ Հասկանալի յե, վոր այդ ամենը չի կարող չարել դասակարգերի պայքարը, Խորհրդային էշխանության քաղաքականությանը մեռնող դասակարգերի ցույց տված ղիմադրությունը։ Ծիծաղելի կլինե՞ր մտածել, թե այդ դասակարգերի ղիմադրությունը չգտնի իր այս կամ այն արտացոլումը մեր կուսակցության շարքերում։ Յեվ նա իրոք կուսակցության մեջ գտնում է իր արտացոլումը։ Մեռնող դասակարգերի ղիմադրության արտացոլումներն են հանդիսանում բոլոր և ամեն տեսակի թեքումները լենինյան գծից, թեքումներ, վոր տեղի յեն ունենում մեր կուսակցության շարքերում։

Կարելի յե, արդյոք, հաջողությամբ պայքար մղել դասակարգային թշնամիների դեմ, միաժամանակ չպայքարելով մեր կուսակցության մեջ թեքումների դեմ, չհաղթահարելով այդ թեքումները։ Վո՞չ, չի կարելի։ Չի կարելի, վորովհետև անհնարին է ծավալել իսկական պայքար դասակարգային թշնամիների դեմ, իսկական ունենալով նրանց արտացոլումը կուսակցության մեջ, թողնելով թիկունքում այն մարդկանց, վորոնք չեն հավատում մեր գործին և ամեն կերպ աշխատում են արգելալի առաջընթացող մեր շարժումը։

Այստեղից էլ լենինյան կուսակցությունից տեղի ունեցող թեքումների դեմ պայքարը, վորպես հերթական խնդիր։

4. ՏՐՈՑԿԻՉՄԸ ՅԵՎ «ՁԱՆ» ԽՈՏՈՐՈՒՄՆԵՐԸ

Տրոցկիզմը, վոր ամբողջովին գլորվել է հակահեղափոխական մենշևիկյան դիրքերը, լիովին մերկացվել է և ջախջախվել դեռևս 15-րդ կուսհամագումարի շրջանում։

Իր ժամանակին Տրոցկին և նրա կողմնակիցները իրենց ձևացնում էյին ԽՍՀՄ ինդուստրացիայի համար պայքարողներ, մեղադրելով Կուսակցությանը նրանում, վոր նա կասեցնում է յերկրի ինդուստրացիայի թափերը: Իսկականում տրոցկիստները զբաղվել են «գերինդուստրացիայի» միայն վերականգնման շրջանում: «Ինչ վերաբերում է վերականգնման շրջանին, ապա տրոցկիստները թափերի տեսակետից հանդիսանում են ամենաձայրահեղ միևնույնիստները և ամենազգվելի կապիտուլյանտները» (Ստալին):

Վերականգնման շրջանի վերաբերյալ տրոցկիստները զարգացրել են և շարունակում են զարգացնել այսպես կոչված «մարվող թեքի» թեորիան, վորի համաձայն ինդուստրացիայի թափերը տարեց տարի պետք է նվազեն: Կյանքը դաժանորեն ծիծաղեց այդ փթած թեորիայի վրա — ԽՍՀՄ սոցիալիստական ինդուստրացումը զարգանում է վոչ թե ըստ մարվող տրոցկիստական թեքի, այլ ըստ «բարձրացող բոլշևիկյան թեքի»:

Սակայն տրոցկիստական հայացքների մնացորդները (ԽՍՀՄ մեջ սոցիալիզմի կառուցելու հնարավորության բացասումը, բանվոր դասակարգի և միջակ գյուղացիության դաշինքի նշանակության չգիտակցումը սոցիալիստական ինարարության համար և միջակ գյուղացիությունը ԽՍՀՄ մեջ սոցիալիզմ կառուցելու մասնակից դարձնելու հնարավորության բացասումը, պայքար Կուսակցության յերկրագլխի գիսցիպլինայի դեմ) դեռևս պահպանվել են Կուսակցության մի քանի ողակներում և ընթացիկ շրջանի ընթացքում իրենց զգալ են տվել այս կամ այն ձևերով:

Տրոցկիզմի հանդեպ հաշտվողականության հատկապես վառ արտահայտություն են յեղել «ձախ խոտորումները», որոնք տեղի յեն ունեցել Կուսակցության մեջ անցյալ

տարի գարնանը կոլխոզային շարժման բնագավառում և վորոնք գործի էյուլթյամբ իրենցից ներկայացրել են միջակ գյուղացիության նկատմամբ հայտաբերած տրոցկիստական, ճիշտ է, անգիտակցական վերաբերմունքի վերածնունդ: «Ձախ» խոտորումները յեղել են «արդյունք քաղաքականության մեջ կատարված այն սխալի, վորպիսին Լենինն անվանում է «գերավարչավորում» (Ստալին):

Հայանի յե, վոր այդ սխալները կարճ ժամանակամիջոցում շտկվել են: Այդ կենտրոնական կոմիտեյի և նրա ղեկավար ընկ. Ստալինի հսկայական ծառայությունն է, ղեկավար կարողացան ժամանակին ամուր ձեռքերով թափավորոնք կարողացան ժամանակին ամուր ձեռքերով թափահարել խոտորվողներին և սխալներ թույլ տված կուսակցական կազմակերպություններին կանգնեցնել Լենինյան ճիշտ գծի վրա:

5. Ա.Ձ ԹԵՔՈՒՄԸ, ՎՈՐՊԵՍ ԳԼԵՍՎՈՐ ՎՏՍՆԳ ՆԵՐԿՍ. ԵՏՍՊՈՒՄ

15-րդ կուսհամագումարից հետո Կուսակցության մեջ գլխավոր վտանգ է դարձել և շարունակում է մնալ այդպիսին մինչև հիմա — աջ թեքումը: Այդ բացատրվում է նրանով, վոր աջ բացարձակ ոպորտունիստական թեքումը Կուսակցության ներսում հանդիսանում է կուլակային տրամադրությունների արտացոլումը, բացառապես սոցիալիստական դրությունների արտացոլումը, բացառապես կուլակության վորպես դասակարգ վերացնելու քաղաքականության յերկրի կապիտալիստական տարրերի ցույց տված դիմադրության արտացոլումը:

